

ՀՀ ԳԱԱ տարեկան ընդհանուր ժողովը՝ ապրիլի 3-ին



Սույն թվականի ապրիլի 2-ին և 3-ին տեղի կունենա ՀՀ ԳԱԱ տարեկան ընդհանուր ժողովը: Այս որոշումն ընդունվել է մարտի 4-ին՝ ՀՀ ԳԱԱ նախագահության նիստում:

Ապրիլի 2-ին տեղի կունենան ՀՀ ԳԱԱ բաժանմունքների տարեկան ընդհանուր ժողովները: Ապրիլի 3-ին տեղի կունենա ՀՀ ԳԱԱ տարեկան ընդհանուր ժողովը: ՀՀ ԳԱԱ 2014 թ. գիտական գործունեության հիմնական արդյունքների մասին զեկույցով հանդես կգա ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը, ՀՀ ԳԱԱ 2014 թ.

գիտակազմակերպական գործունեության մասին զեկույցով հանդես կգա ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար, ԳԱԱ թղթակից անդամ Յրանտ Մաթևոսյանը: Ընդհանուր ժողովում «Հայոց ցեղասպանության ճանաչման և հատուցման իրավաքաղաքական հիմնախնդիրները» գիտական զեկույցը կներկայացնեն ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ Գագիկ Ղազինյանը, Աշոտ Մելքոնյանը, Ռուբեն Սաֆրաստյանը:

ՀՀ ԳԱԱ Տեղեկատվական-վերլուծական կենտրոն

ՆԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ԱՆԴՐԱՆԻԿ ԶՈՐԱՎԱՐԻ ԾՆՆԴՅԱՆ 150-ԱՄՅԱԿԻՆ

XIX դարի վերջի և XX դարի սկզբի հայ ազատագրական շարժման խորհրդանիշերից է ակամավոր հայդուկապետ, ժողովրդական հերոս Անդրանիկ Օզանյանը (1865-1927): Անդրանիկի անձը և գործունեությունը բազում ուսանելի դրվագներ են պարունակում մերօրյա երիտասարդների համար:


2015 թ. փետրվարի 25-ին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտը, ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի ֆինանսական աջակցությամբ, կազմակերպել էր համրապետական գիտաժողով՝ նվիրված Անդրանիկ Օզանյանի ծննդյան 150-ամյակին:

Գիտաժողովի բացումը և առաջին նիստը տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում: Բացման խոսքով հանդես եկավ պատմության ինստիտուտի տնօրեն, ԳԱԱ ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանը: Այնուհետև գիտաժողովի մասնակիցներին ողջունեցին ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ԳԱԱ ակադեմիկոս Յուրի Սուվարյանը, ԵՊՀ ռեկտոր, ԳԱԱ թղթակից անդամ Արամ Սիմոնյանը, ԳԱԱ ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյանը:

Գիտաժողովի առաջին նիստում (նիստավար՝ ինստիտուտի փոխտնօրեն, պ.գ.թ., դոցենտ Կարեն Խաչատրյան) ընթերցվեցին հետևյալ զեկուցումները՝ «Զորավար Անդրանիկի մասնակցությունը Բալկանյան պատերազմներին» (պ.գ.դ. Վահան Մելիքյան), «Հայկական առաջին կամավորական ջոկատի մասնակցությունը Առաջին աշխարհամարտի ռուս-թուրքական ռազմաճակատի մարտական գործողություններին (1914-1916 թթ.)» (պ.գ.դ. Ռուբեն Սահակյան), «Զորավար Անդրանիկի գործունեության պատմության դասերը» (պ.գ.դ. Էդիկ Մինասյան), «1918 թ. գարնանը Անդրանիկ Օզանյանի Ջավախք մեկնելու հանգամանքների շուրջ» (ակադեմիկոս Աշոտ Մելքոնյան), «Անդրանիկի պատասխանը Նուրի փաշայի գրպարտություններին 1918 թ.» (պ.գ.թ. Համո Սուքիասյան):

Ընդմիջումից հետո գիտաժողովի աշխատանքները շարունակվեցին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նիստերի դահլիճում: Երկրորդ նիստում (նիստավար՝ ինստիտուտի Նոր պատմության բաժնի վարիչ, պ. գ. դ. Ռուբեն Սահակյան) ընթերցվեցին հետևյալ զեկուցումները՝ «Արցախյան հարցի մասնակներն Անդրանիկին» (պ.գ.դ. Յրանտ Աբրահամյան), «Արևմտահայ դիվիզիան և ԱՄՆ-ի քաղաքականությունը 1917-1918

թթ.» (պ.գ.դ. Գայանե Մախմուրյան), «Ստեփան Շահումյանի և Անդրանիկի հարաբերությունները» (պ.գ.դ. Վլադիմիր Պետրոսյան), «Անդրանիկը և արևմտահայ փախստականների ներգաղթի խնդիրը 1919 թ. ապրիլին» (պ.գ.թ. Կարեն Հայրապետյան, պ.գ.թ. Քնարիկ Ավագյան), «Զորավար Անդրանիկի գործունեությունը ԱՄՆ-ում և ամերիկահայությունը», «Անդրանիկ Օզան-



յան» (Կամո Առաքելյան):

Գիտաժողովն ունեցավ բեղուն ընթացք: Զեկուցումների ավարտից հետո տեղի ունեցավ աշխույժ հարց ու պատասխան, արդյունավետ գիտական քննարկում: Այնուհետև ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանն ամփոփեց գիտաժողովը՝ ընդգծելով, որ ուրախալի է այն փաստը, որ զեկուցումները վերաբերում էին Անդրանիկի գործունեության գրեթե բոլոր դրվագներին (սկսած հայդուկային պայքարից՝ վերջացած կյանքի վերջին տարիներին ԱՄՆ-ում իրականացրած գործունեությամբ): Վերջում տեղեկացվեց, որ գիտաժողովում ընթերցված զեկուցումները կիրատարակվեն առանձին ժողովածուի մեջ:


ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

Քննարկվեցին Բյուրականի աստղադիտարանի աշխատանքների արդյունավետության բարձրացման հարցերը

Սույն թվականի մարտի 4-ին ՀՀ ԳԱԱ նախագահությունը քննարկեց ՀՀ ԳԱԱ Վիկտոր Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանի Միջազգային գիտական խորհրդատվական հանձնաժողովի աշխատանքի արդյունքները: Հանձնաժողովը ստեղծվել է ՀՀ ԳԱԱ նախագահության 2013 թ. դեկտեմբերի 27-ի որոշմամբ՝ ՀՀ ԳԱԱ Վ. Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանի աշխատանքների արդյունավետության բարձրացման և աստղադիտարանի զարգացման նոր ծրագրի մշակման նպատակով: Հանձնաժողովը մշակել է հաշվետվություն և առաջարկություններ Բյուրականի աստղադիտարանի ապագա զարգացման վերաբերյալ: ՀՀ ԳԱԱ նախագահությունը, հիմք ընդունելով հանձնաժողովի աշխատանքի արդյունքները և նիստում հնչեցված առաջարկություններն ու դիտողությունները, որոշեց հանձնարարել ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի և աստղաֆիզիկայի բաժանմունքին մինչև 2015թ. մարտի 31-ը ՀՀ ԳԱԱ նախագահությանը ներկայացնել ամփոփ եզրակացություն՝ Բյուրականի աստղադիտարանի գիտական, տեխնիկական և կազմակերպչական խնդիրների լուծման մասին:

ՀՀ ԳԱԱ Տեղեկատվական-վերլուծական կենտրոն

Գրիգոր Նարեկացին՝ «Տիեզերական եկեղեցու վարդապետ»



Վատիկանը հայ միջնադարյան մտքի համճար Գրիգոր Նարեկացուն «Տիեզերական եկեղեցու վարդապետի տիտղոս» է շնորհել: Ինչպես տեղեկացրել է «Radio Vatican»-ը, Հռոմի պապ Ֆրանցիսկոսը փետրվարի 21-ին առանձնագրույց է ունեցել Վատիկանի Արևելյան եկեղեցիների ժողովի նախագահ, կարդինալ Անջելո Ամատոյի հետ, որի ընթացքում հաստատել է հայ միջնադարյան հոգևորական, աստվածաբան, բանաստեղծ, երաժիշտ և փիլիսոփա Գրիգոր Նարեկացուն «Տիեզերական եկեղեցու վարդապետի տիտղոս» շնորհելու մասին Արևելյան եկեղեցիների ժողովի կարգիմալների դասի ու եպիսկոպոսների լիազումար նիստի դրական վճիռը:

Գրիգոր Նարեկացու ստեղծագործությունների գազաթնակետը «Մատյան ողբերգության» պոեմն է, որը ժողովրդի մոտ ավելի հայտնի է «Նարեկ» անվանմամբ:

Սանվել ՄԱՆՎԵԼՅԱՆ



դուրսի պատմություն» առաջին գիրքը: Այնուհետև իրար հաջորդեցին Ղրիմի հայկական գաղթողների պատմության ուսումնասիրությանը նվիրված հաջորդ մենագրությունները. 1970-ին հրատարակեց «Ղրիմի հայկական գաղթի պատմություն (1801–1917)» աշխատության 2-րդ գիրքը, 1974-ին՝ «На крымской земле», 1989-ին՝ «Ղրիմահայոց պատմություն» և 2004-ին՝ «История крымских армян» (Симферополь). 1979 թ. լույս տեսավ պատմաբանի «Ծովակալ Լ. Մ. Սերեբրյակով (Ղազար Մարկոսի Արծաթագործյան: Կյանքն ու գործունեությունը)» աշխատությունը, որտեղ լուսաբանվում է հայ ծովակալի առաջնակարգ տեղն ու դերը ռուսական սևծովյան նավատորմի գործունեության պատմության մեջ, հատկապես Ղրիմի պատերազմի ըն-

թաղի վերաբերյալ գիտական միակ փաստաթուղթը Վ. Միքայելյանի շարադրած բովանդակալից ու հիմնավոր տեղեկանքն էր: Պատմագիտական այս խիստ արժեքավոր փաստաթուղթը «Некоторые вопросы истории Нагорного Карабаха» վերնագրով և մասնակի լրացումներով (պատմաբան Լ. Խուրշուդյանի հեղինակակցությամբ) լույս տեսավ «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագրի 1988 թ. 4-րդ համարում: 1992 թ. տպագրվեց «Нагорный Карабах в 1918–1923 гг.: Сборник документов и материалов» խորագրով ժողովածուն, որի կազմողների ղեկավարը, պատասխանատու խմբագիրը և ընդարձակ ներածության հեղինակը կրկին Վ. Միքայելյանն էր: Ակադեմիկոսն անուրանալի ավանդ ունի Հայկական հարցի և Օսմանյան

թվականներից Վ. Միքայելյանը տասնյակ հոդվածներ, գրքեր է հրատարակել, ժողովածուներ կազմել հայոց ցեղասպանության մասին, այն ժխտողների ու կեղծարարների դեմ: Այսպես, 1991 թ. նա հրատարակեց «Генрих Фирдюхер. Армения, 1915. Уничтожение Турцией культурного народа», 1997-ին՝ «Գերմանացի դիվանագետները հայոց ինքնապաշտպանական մարտերի մասին (1915)» գրքերը և այլն:

Ակադեմիկոս Վ. Միքայելյանը գիտական արդյունավետ աշխատանքը զուգակցել է գիտախմբագրական-գիտակազմակերպչական եռանդուն գործունեությանը: Խմբագրական-հրատարակչական աշխատանքը նրա համար տարերք էր, ինքնաբերական լույս տեսավ 1955–1959 թթ. աշխատել է «Սովետական Հայաստան» ամսագրի խմբագրությունում: Երկար տարիներ՝ 1972–1987 թթ., եղել է ՀՀ ԳԱ ավագագույն «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագրի գլխավոր խմբագիրը:

1989-1990 թթ. Վ. Միքայելյանը հիմնադրեց և խմբագրեց «Գոյամարտ» շաբաթաթերթը, որի առաջնահերթ խնդիրը պատմահայրենասիրական բնույթի հարցերի և արցախյան հիմնախնդրի լուսաբանումն էր:

1999 թ. Վ. Միքայելյանը նշանակվում է հայագիտական ու հասարակագիտական մեծ համբավ ունեցող «Պատմաբանասիրական հանդեսի» գլխավոր խմբագիր: Իր համարձակ, նախաձեռնողական քայլերով նա հանդեսի հեղինակությունը մի նոր մակարդակի բարձրացրեց: Վերոհիշյալ բոլոր պարբերականներում Վ. Միքայելյանը հանդես է եկել և՛ որպես խմբագիր, և՛ որպես ակտիվ հեղինակ:

Իրավամբ, նշանավոր պատմաբանը գիտական-խմբագրական տարիների իր տքնաջան և շնորհակալ գործունեությամբ, պատմության ու բանասիրության խոր իմացությամբ և նուրբ դիտողականությամբ անջնջելի հետք է թողել մեր իրականության մեջ:

Ակադեմիկոս Վ. Միքայելյանը մեր ժողովրդի նվիրյալ այն զավակներից էր, ով ոչ միայն իր գիտական անուրանալի վաստակով, խմբագրական-հրատարակչական, գիտամանկավարժական եռանդուն գործունեությամբ, այլև մարդկային ու քաղաքացիական հարուստ նկարագրով իր ուրույն և մշտամնա տեղն ունի մեր ռախտավորների շարքում:

Անուշավան ԶԱԲԱՐՅԱՆ
«Պատմաբանասիրական հանդեսի» գլխավոր խմբագրի տեղակալ, բանասիրական գիտությունների դոկտոր

ԱՆՀԱՏԸ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

(Ակադեմիկոս Վարդգես Միքայելյանի ծննդյան 90-ամյակի առթիվ)

Հայտնի իրողություն է՝ բոլոր ժամանակներում եղել են անհատներ, որոնք իրենց բնատուր խելքով, էրուդիցիայով, բացառիկ աշխատասիրությամբ, անսահման իմացությամբ, ամբիջական ու պարզ, կամեցող և գործունյա բնավորությամբ առանձնացել են միջավայրից: Եվ դա ցայտուն երևում է տարիների հեռվից, երբ հետադարձ հայացքով փորձում ես ի մի բերել նրանց կենսագործունեության շրջանակները: Մեր իրականության մեջ նման անհատներից է եղել Հայրենական մեծ պատերազմի թոհուրթի միջով փառքով անցած, գիտական տքնաջան վաստակով ակադեմիկոսի կոչման արժանացած, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագրի և «Պատմաբանասիրական հանդեսի» նախկին գլխավոր խմբագիր, ԳԱԱ պատմության ինստիտուտի բաժնի վարիչ Վարդգես Ալեքսանի Միքայելյանը, ում ծննդյան 90-ամյակը լրացավ անցյալ տարեվերջին:

Վաստակաշատ հայագետի գիտական հետաքրքրությունների շրջանակը լայն և ընդգրկուն է եղել՝ ներառելով հայ ժողովրդի նոր ու նորագույն շրջանների պատմության բազմաբնույթ հարցեր: Նա առաջիններից մեկն էր, ով գիտակցելով հայ գաղթավայրերի պատմության ուսումնասիրության կարևորությունը, հետազոտության թեմա ընտրեց հայկական գաղթավայրերի ուսումնասիրությունը: Վ. Միքայելյանի վաստակը հատկապես անգնահատելի է միջնադարի ամենախոշոր հայ գաղութի՝ Ղրիմի ուսումնասիրման բնագավառում: 1964 թ. լույս տեսավ գիտնականի «Ղրիմի հայկական գա-

թացքում:

Նկատենք, որ Ղրիմահայոց պատմությանը նվիրված գրքերով Վ. Միքայելյանը նաև վերհանել է հայ ժողովրդի միջազգային կապերի պատմությունը: Այս առումով խոշոր արժեք ունեն «Հայ-իտալական առնչություններ, Ջենովական փաստաթղթերը Ղրիմահայերի մասին» (1974 թ.) ժողովածուն և «Ղրիմահայ գաղութը Արևելք-Արևմուտք հարաբերությունների ոլորտում (13-18-րդ դարեր)» (2000 թ.) մենագրությունը:

Հետագա տարիներն ևս Վ. Միքայելյանը շարունակել է ուշադրության կենտրոնում պահել հայ գաղթավայրի պատմությունը: Նրա նախաձեռնությամբ և խմբագրությամբ նախապատրաստվել ու հրատարակվել են «Հայ գաղթաշխարհի պատմության» հատորները:

Անվանի պատմաբանի գիտական ուսումնասիրության մյուս կարևոր ոլորտը, որտեղ նա մեծ ներդրում ունի, Հայաստանի հետ Լեռնային Ղարաբաղի վերամիավորման ուղղությամբ նրա անգնահատելի ծառայությունն է: 1960-ական թվականների վերջերից Վ. Միքայելյանը արցախյան հիմնահարցի արդար լուծման ակտիվ սատարողներից էր, այն սակավաթիվ պատմաբաններից, որոնք խոսքով ու գրչով աշխատում էին հանրությանը ներկայացնել այդ խնդրի սկզբնավորման հանգամանքներն ու հետևանքները: Այս առումով չժավալվելով հանդերձ՝ նկատենք. բոլորին է հայտնի, որ Արցախյան շարժման վերելքի օրերին՝ 1988 թ. մարտի 2-ին, Երևան ժամանած ԽՄԿԿ Կենտկոմի քարտուղարներ Ա. Լուկյանովին և Վ. Դոլգիխին հանձնված Լեռնային Ղարա-

կայությունում Հայոց ցեղասպանության ուսումնասիրության բնագավառում: Գերմաներենի իմացությունը նրան հնարավորություն տվեց 1989 թ. մեկնել Բոնն՝ գերմանական արխիվներում հայոց ցեղասպանության վերաբերյալ նյութերի ուսումնասիրության համար: Կարճ ժամանակամիջոցում նա ժողովեց ավելի քան 3500 արխիվային միկրոկադրեր, որից 1000-ից ավելին տեղ են գտել 1995-ին նրա կազմած «Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919). Материалы Политического архива м-ва иностр. дел Кайзеровской Германии» վերնագրով ժողովածուում՝ առաջաբանով, ներածությամբ և հմուտ ծանոթագրություններով: Ինչպես իրավացիորեն նկատվել է, Վ. Միքայելյանին տքնաջան, պատասխանատու և հայրենասիրական այս գործին մղել է այն իրողությունը, որ թուրքական կառավարող շրջանները, պաշտոնական և ոչ պաշտոնական պատմագրությունը, քարոզչական ողջ մեքենան ջանում էին (այսօր ևս՝ առավել ճիգերով ու ցինիզմի հասնող անդրդվելիությամբ) «ապացուցել», որ Օսմանյան կայսրությունում հայերի ցեղասպանություն չի եղել:

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտը հիշյալ ժողովածուն 2004 թ. հրատարակեց գերմաներեն՝ «Die armenische Frage und der Genozid an den Armenien in der Türkei (1913-1919). Dokumente aus dem politischen Archiv des deutschen auswärtigen Amts. Zusammengestellt und eingeleitet von Prof. Dr. Wardges Mikaeljan» վերնագրով (ավելի քան 40 մամուլ):

Նկատենք նաև, որ 1980-ական

ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ

«Պատմաբանասիրական հանդես» N 3

Լույս է տեսել «Պատմաբանասիրական հանդեսի» 2014 թվականի վերջին՝ երրորդ համարը: Այս համարը նույնպես բաղկացած է հոդվածների, հաղորդումների, քննարկումների, հրապարակումների, գրախոսությունների, մեր հոբելյարները, մեր երախտավորները, գիտական կյանք և լրատու բաժիններից: Համարում տեղ են գտել նյութեր հայագիտության տարբեր բնագավառների վերաբերյալ՝ պատմագիտություն, արվեստաբանություն, ցեղասպանագիտություն, ձեռագրագիտություն, լեզվաբանություն, եկեղեցաբանություն և այլն:

Աշոտ Մելքոնյանի «Առաջին աշխարհամարտ-Հայոց ցեղասպանություն. պատճառներ և հետևանքներ» հոդվածում հեղինակը խոսել է Առաջին համաշխարհային պատերազմի պատճառների, այդ պատերազմում գերտերությունների հետապնդած շահերի, նպատակների, հա-

յության վիճակի, ինչպես նաև Հայոց մեծ եղեռնի պատճառների մասին:

Հանդեսի այս համարում հրապարակված հոդվածներից է Սուսաննա Հովհաննիսյանի «Հովի. Թումանյանի հանդիպումները ռուս զորավարների հետ (նոյեմբեր-դեկտեմբեր 1914 թ.)» (ռուս.) հոդվածը: Այն Առաջին աշխարհամարտի առաջին ութ ամիսներին Հովհաննես Թումանյանի և մի խումբ հայ հոգևորականների ու մտավորականների՝ հայ կամավորական խմբերի և հայ բնակչության նկատմամբ ռուս զինվորական հրամանատարության վերաբերմունքը պարզելու համար Արևմտյան Հայաստանում կատարած շրջագայությունների մասին է:

Հետաքրքիր ու արդիական է Հարություն Մարությանի «Թանգարան և հուշարձան (Հայոց և հրեաների փորձառության համեմատական վերլուծություն)» հոդվածը,

որտեղ հեղինակը խոսել է Հայոց ցեղասպանության և հրեաների Հոլոքոստի կոլեկտիվ հիշողության կրողների տարածական ու քանակական շրջանակների մասին, անդրադարձել Ցեղասպանության և Հոլոքոստի թեմաների արժարժանքը, խոսել Հայոց ցեղասպանության գաղափարական բաղադրիչի (մարդկության դեմ կատարված հանցագործություն) մասին: Հոդվածագիրն անդրադարձել է նաև Հայոց ցեղասպանության ուսումնասիրության գործին լծված հայաստանյան պատմագիտության մեջ ձևավորված մոտեցմանը՝ այն համեմատելով Հոլոքոստն ուսումնասիրող պատմաբանների մոտեցման հետ: Հայոց ցեղասպանության և հրեական Հոլոքոստի թանգարանների մասին խոսելիս Հարություն Մարությանը կանգ է առել Հոլոքոստին նվիրված թանգարանների ձևավորման ու գործունեության հարցում հրեական գործնի տեղի ու դերի վրա, ներկայացրել ցեղասպանությանը նվիրված թանգարանների քարոզչական արժեքն ու դերը:

Պաշյա ԲԱՆՈՅԱՆ բան. գիտ. թեկնածու



ՀՀ ԳԱԱ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ

Ներկայացնում է ՀՀ ԳԱԱ սփյուռքի բաժինը

ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՌԳԱ ակադեմիկոս Ալեքսանդր Չուբարյանը ծնվել է 1931 թվականի հոկտեմբերի 14-ին Մոսկվայում՝ անվանի պրոֆեսոր, գրադարանագիտության ոլորտում հայտնի մասնագետ Օհան Չուբարյանի ընտանիքում:

Ա. Չուբարյանը, 1950 թվականին ավարտելով միջնակարգ դպրոցը, ընդունվում է Մոսկվայի Մ. Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի պատմության ֆակուլտետը:

1953 թ. գերազանցությամբ ավարտելով համալսարանը, նա ընդունվել է ասպիրանտուրա: ԽՍՀՄ ԳԱ իսկական անդամ Ի. Մ. Մայսկին ստեղծել էր Իսպանիայի և Պորտուգալիայի պատմության հետազոտական խումբ: 1958-ին, մինչև ասպիրանտական ժամկետն ավարտելը, Ա. Չուբարյանին ընդունում են աշխատանքի: Շուտով նա հաջողությամբ պաշտպանում է թեկնածուական թեզը՝ «ԽՍՀՄ արտաքին քաղաքականության սկզբունքները» թեմայով:



վագույներից լավագույնին»:

1990թ. Ա. Չուբարյանը ընտրվել է պատմական գիտությունների միջազգային կոնգրեսի բյուրոյի անդամ, 1994 թ.՝ ՌԳԱ թղթակից անդամ: 1996 թ. նրան շնորհվել է Նորվեգիայի գիտությունների ակադեմիայի արտասահմանյան անդամի կոչում: 1996 թ. ստեղծվել է Հունանիտար գիտությունների պետական համալսարանը, որը ղեկավարում էր Ա. Չուբարյանը: Դառնալով ռեկտոր, նա պաշտոնը համատեղել է պատմության ֆակուլտետի ղեկանի պարտականությունների հետ:

2000թ. Ա. Չուբարյանը ընտրվել է ՌԳԱ իսկական անդամ (ակադեմիկոս): Նրա հատուկ զեկույցը՝ «Գնահատական. XX դարի արժեքը համաշխարհային պատմության մեջ» լսվեց ՌԳԱ նախագահության միստուն:

Եվրոպական գաղափարների ու Եվրոպայի պատմության ուսումնասիրությունը դարձել էր նոր ուղղություն ռուսական պատմագիտության մեջ, որն ստեղծել է ակադեմիկոս Ա. Չուբարյանը: Նա է նաև «Ռուսաստանն ու Եվրոպան XIX-XX դդ.» թեմայի ուսումնասիրության առաջնորդը: Նա Եվրոպայի պատմության (1992-2000 թթ.) բազմահատորյակի խմբագիրն է, և որպես գլխավոր խմբագիր՝ մի քանի առաջատար հրապարակումների հեղինակ: Ակադեմիկոս Ա. Չուբարյանը առանձնահատուկ ուշադրություն է դարձրել Երկրորդ համաշխարհային պատերազմի զարգացման խնդրահարույց պատճառներին, և այս թեմային է նվիրված 2008 թ. տպագրված նրա մենագրությունը «Канун трагедии. Сталин и международный кризис. Сентябрь 1939-июнь 1941 года» (М., 2008):

Ա. Չուբարյանը «Միջազգային հարաբերությունների պատմությունը XX դարում» գիտական ուղղության առաջատարներից է: Ի դեպ, նա է առաջինը դիտարկել «սառը պատերազմի ավարտը» խնդիրը՝ «Սառը պատերազմի 1945 - 1963 տարիները. Պատմական հետախազ» (М., 2003) գրքում:

2009 թ. տպագրվել է Ա. Չուբարյանի մենագրությունը «20-րդ դար. Պատմաբանի տեսանկյուն» (М. «Найка», 2009):

Միևնույն ժամանակ Ա. Չուբարյանը եղել է պատասխանատու խմբագիրը մի շարք պարբերականների՝ «Եվրոպական պլանմախ», «Ռուսաստանը և Բալթյան երկրները», «Քաղաքակրթություն», «Միջազգային հասարակական գիտություններ» ամսագրի, միջազգային ամսագրի, «Cold War History» («Սառը պատերազմի պատմություն»): Նա նաև գլխավոր խմբագիրն է միջազգային ասոցիացիայի ԱՊՀ երկրների պատմական ինստիտուտների՝ «Պատմական տարածք: ԱՊՀ երկրների պատմության խնդիրները» ամսագրի:

2007թ. Ա. Չուբարյանը ընդգրկվել է ՌԴ կառավարությանն առընթեր Կրոնական միավորումների հանձնաժողովի կազմում: Միևնույն ժամանակ նա ՌԳԱ նախագահության անդամ էր, ՌԴ

նախագահության և առընթեր գիտության, կրթության և բարձր տեխնոլոգիաների խորհրդի անդամ, ՌԴ նախագահին առընթեր պատմության կեղծման դեմ հանձնաժողովի անդամ: Նրա նախաձեռնությամբ ստեղծվել է ԱՊՀ երկրների պատմության ինստիտուտների միջազգային ասոցիացիան, որի նախագահն է: Մեծ է նրա ներդրումը ԱՊՀ երկրների պատմության ինստիտուտների հետ համագործակցության զարգացման գործում՝ այդ թվում ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հետ:

Ա. Չուբարյանը ՌԴ կրթության և գիտության նախարարության պատմության գծով գիտական և մեթոդական խորհրդի նախագահն է: Նա է ղեկավարել հեղինակային խմբերի աշխատանքը՝ մի շարք դասագրքերի և ուսումնական նյութերի պատրաստման աշխատանքները: Նա համահեղինակ և պատասխանատու խմբագիրն է XX-XXI դարի սկզբի ազգային պատմության դասագրքի և մեթոդական ձեռնարկի, որը նախատեսված է միջնակարգ դպրոցի 11-րդ դասարանի համար:

Ակադեմիկոս Ա. Չուբարյանը մի շարք հասարակական կազմակերպությունների անդամ է և ղեկավար: 1995-2005 թթ. նա գլխավորել է «Ռուսական պատմաբանների և արխիվիստների միությունը» և այսօր պատվավոր նախագահներից մեկն է և կենտրոնական խորհրդի անդամը:

2011 թ. Ա. Չուբարյանի նախաձեռնությամբ անց է կացվել ԲՈՒՀ-ական և դպրոցական պատմության ուսուցիչների Համառուսական առաջին համաժողովը, ուր ստեղծվել է «Պատմության և հասարակագիտության ուսուցիչների ասոցիացիա» համառուսական հասարակական կազմակերպությունը:

Ակադեմիկոս Ա. Չուբարյանը ավելի քան 300 գիտական հոդվածների և մենագրությունների հեղինակ է: Նա պարգևատրվել է Ռուսաստանի պետական մրցանակներով և շքանշաններով՝ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» IV աստիճանի (2006 թ.) և III աստիճանի (2011 թ.), Պատվո ճշան մեդալով (1999 թ.): Նա Պատվո լեգեոնի ասպետ է (Ֆրանսիա), պարգևատրվել է Սպայական խաչով (Գերմանիա) և Գրիգոր VI մեդալով (Վատիկան): Ա. Չուբարյանը արժանացել է գիտության և տեխնիկայի բնագավառում ՌԴ պետական մրցանակի (2013 թ.):

Հաշվի առնելով Ալեքսանդր Չուբարյանի գիտական ձեռքբերումները և սերտ կապերը Հայաստանի հետ, բարձր գնահատելով նրա ավանդը գիտության մեջ, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան 2000 թվականին նրան ընտրել է ԳԱԱ արտասահմանյան անդամ: Արձանագրեմք, որ այսօր էլ անվանի գիտնականը սերտորեն համագործակցում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի և ընդհանրապես հայ պատմաբանների հետ:

Ալեքսանդր Չուբարյան

1968-ին ԽՍՀՄ ԳԱ պատմության ինստիտուտը բաժանվում է երկու մասի, և ձևավորվում է ԽՍՀՄ ԳԱ համընդհանուր պատմության ինստիտուտը, որը ղեկավարում էր ակադեմիկոս Եվ. Մ. Ժուկովը՝ արդի ժամանակների միջազգային հարաբերություններին, պատմական հետազոտության մեթոդաբանության ամենախոշոր մասնագետներից մեկը: Աշխատել նրա հետ մեծ դպրոց էր երիտասարդ Ա. Չուբարյանի համար: Պատմական գիտությունների թեկնածու Ա. Չուբարյանը շարունակում էր աշխատանքը՝ մասնագիտանալով միջազգային հարաբերությունների և քսաներորդ դարի արտաքին քաղաքականության մեջ: Այդ աշխատանքի արդյունքներից է նրա «Брестский мир. 1918 г.» (Մոսկվա, 1963) մենագրությունը:

1966 թ. մինչև 1973 թ. Ա. Չուբարյանը եղել է ԽՍՀՄ ԳԱ պատմության բաժանմունքի գիտական քարտուղարը: Միևնույն ժամանակ (1966-1976 թթ.) նա դասավանդում է ԽՍՀՄ ԱԳՆ դիվանագիտական ակադեմիայիում: Մեծ հետաքրքրություն է առաջացրել Ա. Չուբարյանի «Тайное становится явным. Об издании секретных договоров царского и временного правительств» (Մոսկվա, 1970) մենագրությունը: Գրքում լուսաբանվել են խորհրդային Ռուսաստանի իշխանությունների կողմից 1917-1918 թթ. կնքված զաղտնի պայմանագրերը և դրանց միջազգային արձագանքը: 1973 թ-ին Ա. Չուբարյանը ընտրվել է Եվրոպայի ժամանակակից պատմության միջազգային ասոցիացիայի փոխնախագահ:

Ա. Չուբարյանը քառասունամյակը նշել էր՝ ավարտելով դոկտորական թեզը: Նրա գիտական աշխատանքի հիմնական ուղղություններն են դառնում Եվրոպայի պատմությունը և Եվրոպական գաղափարները Ռուսաստանում, միջազգային հարաբերությունների պատմությունը և արտաքին քաղաքականությունը XX դարում: 1973-ին պատմական գիտությունների երիտասարդ դոկտոր Ա. Չուբարյանը դարձել է սեկտորի ղեկավար, ապա ԽՍՀՄ ԳԱ համընդհանուր պատմության ինստիտուտի բաժիններից մեկի պետ: Այդ ժամանակ տպագրվել է «Համաշխարհային պատմություն» XI հատորը, որի համահեղինակ և պատասխանատու խմբագիրն է եղել Ա. Չուբարյանը: 1979 թ-ին նա ստացել է պրոֆեսորի կոչում:

1983 թվականին Ա. Չուբարյանը տպագրում է «Европейская идея в истории. Взгляд из Москвы» (Մոսկվա, 1983) մենագրությունը, որը հետաքրքրություն է առաջացրել ոչ միայն մասնագիտական շրջանակներում՝ պատմաբանների և փիլիսոփաների, այլև հասարակության շրջանում:

1988 թ. նա ընտրվել է ԽՍՀՄ ԳԱ համընդհանուր պատմության ինստիտուտի տնօրեն: 90-ականների չափազանց դժվար տարիներին անհրաժեշտ էր պահպանել առաջատար գիտնականների կազմը մի միջավայրում, ուր պահանջվում էր կրճատել աշխատակազմը: Խորհրդակցելով գիտ-խորհրդի հետ Ա. Չուբարյանը կայացրել է հեռատես որոշում, որը թույլ է տվել պահպանել ինստիտուտի հմուտ աշխատակազմը և սերնդափոխությունը՝ ընտրելով «Լա-

ՀՀ ԳԱԱ Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտը միակն է Հայաստանում, որ ունեցավ կոնֆոկալ մանրադիտակ

Վերջերս ՀՀ ԳԱԱ Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտում կայացավ երեք գծային լազերային սկանավորող կոնֆոկալ մանրադիտման լաբորատորիայի բացման արարողությունը:

ՀՀ ԳԱԱ ֆիզիոլոգիայի ինստիտուտը միակն է Հայաստանում, որ ձեռք է բերել կոնֆոկալ մանրադիտակ: Այն բժշկականասաբանական ուսումնասիրություններում առաջնային և առավել կիրառելի գործիքներից է: Մանրադիտակի միջոցով պարզաբանվում են նյութաֆիզիոլոգիական և հյուսվածաբանական կառուցվածքների խնդիրները: Այն պատկերում է սուպրամոլեկուլյար մակարդակի կառուցվածքային և մակերևութային կենսաբանության ոլորտի խեղդիները: ՀՀ ԳԱԱ ֆիզիոլոգիայի ինստիտուտը մանրադիտակը ձեռք է բերել ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի «Գիտական սարքավորման արդիականացման մրցութային ծրագրի» դրամաշնորհի միջոցներով:

Լաբորատորիայի բացման արարողությանը ելույթներով հանդես եկան ՀՀ ԳԱԱ Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի տնօրեն Նաիրա Այվազյանը, կոնֆոկալ մանրադիտակն արտադրող գերմանական «Լեյկա» ընկերության ներկայացուցիչ Յան Պալան: Միջոցառմանը հրավիրված էին բժշկականասաբանական հաստատությունների տնօրեններ, գիտնականներ:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական կենտրոն

ԱՄՆ-ի Հարավային Դակոտա Նահանգը ճանաչել է Հայոց ցեղասպանությունը

Հարավային Դակոտայի Ներկայացուցիչների պալատը փետրվարի 25-ին 51 կողմ, 17 դեմ ձայնով ընդունել է Հայոց ցեղասպանությունը դատապարտող բանաձև՝ այդպիսով դառնալով ԱՄՆ-ի 43-րդ նահանգը, որը ճանաչում է հայերի դեմ իրականացված ցեղասպանությունը: Այս մասին հայտնում է «Ասպարեզ» պարբերականը:

Բանաձևում դատապարտվում է ժխտողական քաղաքականությունը և կոչ է արվում Հարավային Դակոտայի դպրոցներում դասավանդել «Հայոց ցեղասպանություն» առարկան: Բանաձևում անդրադարձ է կատարվում նաև հույների և ասորիների ցեղասպանությանը:

«Հարավային Դակոտայում 2015 թվականը որպես 1915-1923 թվականներին Հայոց ցեղասպանության հարյուրամյակի հիշատակության տարի նշելով՝ կոչ ենք անում Կոնգրեսին և ԱՄՆ-ի նախագահին պաշտոնապես ու հետևողականորեն ճանաչել և վերահաստատել պատմական ճշմարտությունը. Անատոլիայում՝ իրենց պատմական հայրենիքում ապրող հայերի, հույների և այլ քրիստոնյաների դեմ կատարված վայրագությունները եղել են ցեղասպանություն: Կոչ ենք անում նաև աշխատել հայ-թուրքական ամուր, կայուն հարաբերությունների ձևավորման ուղղությամբ», - ասվում է բանաձևում:

Կիլիկիահայերն Ամերիկայի Միացյալ Նահանգներ են մեկնել անձնական, կրթական, տնտեսական, քաղաքական, մշակութային, կրոնական և այլ հանգամանքներից ելնելով: Սկզբում այն կրթական ու տնտեսական նախապայմաններից դրդված պանդուխտների (գլխավորապես ամուրի երիտասարդներ, ուսանող, առևտրական, արհեստավոր, հողամշակ, գործավոր) ժամանակավոր բնույթ կրող տեղաշարժ էր, որը Օսմանյան կայսրությունում հայության նկատմամբ գործադրված պարբերական ջարդերի (1894-1896 թթ., 1909 թ.) և Հայոց ցեղասպանության (1915-1923 թթ.) հետևանքով վեր է ածվել տնտեսական, քաղաքական, մշակութային ու կրոնական ապահով կյանքի հեռանկարից զրկված և հասարակական ու սեռատարիքային բոլոր շերտերը ներառող զանգվածային գաղթի՝

ԿԻԼԻԿԻԱՎՃԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԱՄՆ-ՈՒՄ ԵՎ ԿԱՊԸ ԲՆՕՐՐԱՆԻ ՀԵՏ

ընդգրկելով կայսրության ողջ հայաբնակ շրջանները, այդ թվում՝ նաև Կիլիկիան:

1909 թ. Ադանայում (Կիլիկիա) երիտթուրքերի կողմից իրականացված զարհուրելի ջարդերը վերջնականապես ի դերն են արել իրենց «դեմոկրատական» հռչակած իշխանությունների նկատմամբ հայության փայփայած վերջին հույսերը՝ մղելով նրանց դեպի անձամոթ հորիզոններ: Թեև ջարդերը տեղի էին ունեցել Կիլիկիայում, հայերը հեռանում էին կայսրության հայաբնակ գրեթե բոլոր շրջաններից, քանի որ այդ վայրերում ևս ցանկացած պահին նույնպիսի իրավիճակում հայտնվելու սարսափը չափազանց մեծ էր: Կիլիկիահայության կոտորածին ու նրանց թշվառ վիճակին ականատես միսիոներ վեր. Մաքսլումը կոտորածներից վերապրողներին բժշկական, նյութական և այլ օգնություն ցույց տվող կազմակերպությանն առաջարկում էր ամբողջ գուժարները հատկացնել իրաշքով փրկվածներին ԱՄՆ, Կանադա կամ Բրազիլիա տեղափոխելու համար, քանի որ պարզ էր, որ «հաջորդ ջարդը ընդամենը ժամանակի հարց է»:

Օսմանյան կայսրությունից մինչև 1911 թ. հայերն ԱՄՆ էին մեկնում որոշակի շրջաններից, արևմտահայկական տարածքներից գաղթողները՝ Սև ծովի գլխավոր Ամստոն նավահանգստից, իսկ կիլիկյան տարածքից գաղթողները՝ միջերկրածովյան Ալեքսանդրետ և Բեյրութ նավահանգստային քաղաքներից: Հետագա տարիներին համեմատաբար թույլ ստուգման ենթակա այս վերջին երկու կայաններով են Ամերիկա մեկնել թուրքական ոստիկաններից փախուստ տվող շատ հայեր:

Նոր երկրում կիլիկիահայ պանդուխտների և գաղթական բեկորների թվի ստվարացումով և այնտեղ նրանց տարածմանը զուգընթաց՝ հայաշատ գրեթե բոլոր վայրերում ազգային համախմբման ու կազմակերպման, ամերիկյան համայնակով միջավայրում ազգային ինքնությունը պահպանելու, ինչպես նաև հայրենի բնօրրանի և ժողովրդի հետ կապն ապելի գործուն ու հարատև դարձնելու նպատակով կազմավորվել են օտարության մեջ ազգապահպան կարևոր դեր ու նշանակություն ունեցող կառույցներ (եկեղեցի՝ Առաքելական, Ավետարանական, Կաթոլիկ, դպրոց, պարբերական մամուլ՝ հայերեն և հայատառ թուրքերեն), ինչպես նաև կրթական, մշակութային, բարեփրական, հոգևոր, սոցիալական, քաղաքական ու այլ բնույթի մեծ ու փոքր ազգային միություններ ու տարբեր կազմակերպություններ (հայրենակցական, կուսակցական, մասնագիտական և այլն):

1886 թ. Նյու Յորքում հիմնված ԱՄՆ-ում հայկական առաջին կազմակերպությունը՝ Հայկական միությունը, իր հովանավորության տակ էր վերցրել նաև հայրենիքում գտնվող երկու դպրոց, զգալի գումար հանգանակել ի նպաստ XIX դարավերջին իրկիզված Ջեթթունի և ազգային այլ հաստատությունների:

Արդեն XIX դ. 80-ական թվականների վերջից ստեղծված հայրենակցական հա-

մախմբումներն աստիճանաբար ներառել են հայրենի գրեթե բոլոր քաղաքները, գյուղերն ու ավանները, ընդ որում նաև Կիլիկիան (Ադանա, Մարաշ, Ուրֆա, Հաճըն, Այնթապ և այլն): Հիշյալ հայրենակցական միությունները լավ կազմակերպված և օրեցօր բազմամարդ դարձող ազգային միություններ էին, որոնք ժամանակի ընթացքում ընդարձակվելով, իրենց մասնաճյուղերն են հիմնել լայնածավալ երկրի հայաշատ գրեթե բոլոր այն քաղաքներում, որտեղ բնակվում էին իրենց հայրենակիցները: «Ինչպես որ Հայաստանի եւ Կիլիկիոյ մէջ չէ մնացած քաղաք կամ գիւղ մը, որ իւր ներկայացուցիչները չունենայ Ամերիկայ, նոյնպէս Ամերիկայի մէջ չկան որեւէ քաղաքի կամ գիւղի 20 կամ աւելի հայրենակիցներ, որ չունենան իրենց ծննդավայրին մէջ դաստիարակութեան գործին նպաստելու համար

տանտի տերությունների, ցարական Ռուսաստանի և Ֆրանսիայի զորամիավորումների հետ կողք կողքի քաջաբար մարտընչելով գերմանական ուժերի և երիտթուրքական ու քեմալական իշխանությունների դեմ: Կամավորական շարժման նշանաբանն էր «Ինքնավարութիւն վեց վիլայէթներու և անոնց անբաժան մասը կազմող Կիլիկիայի»:

1916 թ. հոկտեմբերի 27-ին Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի կառավարությունները, Փարիզի Ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբարի մասնակցությամբ, Լոնդոնում համատեղ համաձայնության էին եկել (Սալթս-Պիկոյի համաձայնություն)՝ կազմել հայ, ինչպես նաև արաբ կամավորներից բաղկացած «Արևելյան լեգեոն» («Legion d'Orient») անվանումը կրող զորամիավոր, որը, իբրև օժանդակ ուժ,



մասնավոր կազմակերպութիւն», - մշել է Մուշեղ եպս. Սերոբյանը:

ԱՄՆ-ում գործող կիլիկիահայ Կրթասիրաց, Ուսումնասիրաց ու Դպրոցասիրաց ընկերությունների կողքին, հատկապես 1900-ական թվականներից սկսած, աստիճանաբար ի հայտ են եկել հայրենի հուսալքված բնակչությանն ամեն կերպ աջակցելու, ավերված բնակավայրերն ու կրթօջախները վերականգնելու, ինչպես նաև անհամար որբերին սատարելու կոչված բազմաթիվ հայրենակցական ընկերություններ ու միություններ, որոնք, սերվելով վերոհիշյալ ուսումնասիրածներից և ժամանակի ընթացքում ու պատմական հանգամանքների բերումով վերակառուցելով դրանց նախկին գործունեությունը, արդեն 1914 թվականից, իրենց առջև դրված նոր խնդիրներին համապատասխան, կրել են Այրիախնամ, Որբախնամ, Որբասիրաց, Աղքատախնամ ու Նպաստամատույց անուններ: Հայրենակիցներին սատարելու կոչված վերոհիշյալ նոր ընկերությունների կողքին, դրանց հետ համագործակցված, գործել են նաև մի շարք կիլիկիահայ հայրենակցականների Տիկնանց որբախնամ և Հիվանդանոցային օժանդակ ընկերություններ: Թվարկված բոլոր ընկերություններն էլ զգալի նյութական միջոցներ են հատկացրել տարագրված և հատկապես Դեր Ջոր ու արաբական անապատի այլ տարածքներ թշված հայրենակիցներին հայտնաբերելու ու նրանց բազմակողմանի օգնություն ցույց տալու համար: Հայրենակցական հիշյալ ընկերությունները զգալի ներդրում են ունեցել նաև 1916 թ. կովկասյան, ապա՝ կիլիկյան կամավորական շարժումներին նյութապես ու բարոյապես, զինվորական ու ռազմական առումներով խթանելու ուղղությամբ, Կիլիկիո կաթողիկոսության միջոցով դրամական օժանդակություն առաքել՝ ի նպաստ կարոտյալ հայրենակիցների, բոլոր միջոցներով աջակցել Մերձավոր Արևելքի Նպաստամատույցի և այլ կազմակերպությունների ազգօգուտ ջանքերին:

Ամերիկահայերն իրենց գործուն մասնակցությունն են ունեցել Առաջին աշխարհամարտի տարիներին և հետո Կովկասում, ապա՝ Կիլիկիայում կազմակերպված կամավորական շարժումներին՝ սկսած 1915 թ. Վանի ինքնապաշտպանական կռիվներից մինչև 1918 թ. Արաբայի հերոսամարտը Ան-

պատերազմի տարիներին Ֆրանսիական բանակի կազմում պիտի կռվեր բացառապես Ասիական Թուրքիայի մաս կազմող Սիրիայում և Կիլիկիայում, այնուհետև՝ թուրքերի դեմ հաղթանակից հետո, որպես քաղաքապահ ուժ, ապահովեր Ֆրանսիական հոգատարության ներքո Կիլիկիայի ինքնավարությունը:

1916 թ. նոյեմբերի 26-ին հիմնվել էր օսմանյան հպատակներից կամավոր հիմունքներով հավաքագրված «Արևելյան լեգեոնը»: Կամավորագրումը սկսվել է Եգիպտոսում, որի կորիզը կազմել են 600 մուսալեռցիներ (Ֆրանսիայի շնորհիվ Փոթո-Սաիդում ապաստանածներից), ապա նաև՝ 300 եգիպտահայեր, նույնքան էլ օսմանյան բանակից և այլ վայրերից փախստական հայեր:

Կամավորական շարժումը մեծ ոգևորություն է առաջացրել տարագիր հայության, հատկապես՝ ամերիկահայության շրջանում: Համախմբման նկատմամբ ամերիկահայ ազգայինների դրևաբան բարձր գիտակցության շնորհիվ հնարավոր էր դարձել 1917 թ. մարտի 16-26-ը Բոստոնում անցկացնել քաղաքական չորս կուսակցությունների միջև համերաշխության բանակցությունների յոթ միստեր, որոնց ընթացքում էլ կազմակերպվել էր Ամերիկայի հայ ազգային միությունը (ԱՀԱՄ): Միությունը բաղկացած էր քաղաքական չորս կուսակցությունների (ՍԴՀ, Վերակազմյալ ինչակյան, ՀՀԴ, ՀՄՈ), ազգային երկու եկեղեցիների (առաքելական, ավետարանական) և ՀԲԸՄ ներկայացուցիչներից: Ընտրվել էր միության 18 անդամներից բաղկացած կենտրոնական մարմին (ատենապետ Միհրան Սվազյան): Կարճ ժամանակում ԱՄՆ-ում արդեն ստեղծվել էր միության 187 մասնաճյուղ: Ամերիկյան պաշտոնական շրջանների կողմից այն ճանաչվել է որպես ամերիկահայ գաղութը ներկայացնող մարմին՝ դառնալով հայկական առաջին լոբբիստական կազմակերպությունը ԱՄՆ-ում: Ամերիկայի հայ ազգային միության նպատակն էր ամերիկահայ նյութական ու բարոյական ուժերը համախմբել և դրանք ի սպաս դնել Հայաստանի և Կիլիկիայի ազատագրմանը, վերաշինությանն ու կարոտյալների անմիջական օգնությանը, ինչպես նաև՝ ԱՄՆ-ում հայանպաստ պրոպագանդա և դիվանագիտական ձեռնարկներ իրակա-

նացնել:

Կարճ ժամանակում, ընդամենը վեց ամսում (1917 թ. հունիսի 9-նոյեմբերի 3), Ֆրանսիական հովանավորության ներքո սկսված կամավորական շարժման իրենց մասնակցությունը բերելու նպատակով անդամագրվել էր 5.000 ամերիկահայ, սակայն փոխադրական միջոցների սղության պատճառով (մեկ-երկու մեծ փոխադրամավ տրամադրելու փոխարեն, հատկացվել էր առավելապես յոթ տասնյակ մարդ փոխադրող, ոչ բավարար տարողության 17 բեռնակիր նավ) մեկնելու հնարավորություն էր ընձեռվել ընդամենը 1.172-ին, իսկ մնացյալը հետագայում զինվորագրվել է ԱՄՆ-ի բանակին՝ կռվելով Գերմանիայի դեմ արևմտյան ճակատներում:

Մեծ մասամբ քեսապցի, սեբաստացի, խարբերոցի, արաբկիրոցի, չնքուշցի, տիգրանակերտցի, հուսեյնիկցի այդ երիտասարդները ներառում էին ԱՄՆ-ի գրեթե բոլոր հայաշատ նահանգները: Կամավորագրվածների մեծ մասը կուսակցականներ էին՝ վերակազմյալ ինչակյաններ, դաշնակցականներ, սոցիալ-դեմոկրատ ինչակյաններ, ռամկավարներ: Պ. Տեփոյանի բնորոշմամբ, «Ամերիկահայեր իրենց խորքին մեջ մեկ քանի տասնեակ տարիներով կուսակցական ճիգերու շնորհիւ պատրաստուած բարձրորակ հայրենասէրներ էին: Անշուշտ ազատ ապրելու և մտածելու միջավայրը իր մեծ նպաստը բերած էր այդ հայրենասիրութեան դիեցման աշխատանքին մէջ»: «Արևելյան լեգեոն» կամավորագրված ամերիկահայերի կազմում կային նաև մի շարք բարձրաստիճան զինվորականներ (հրամանատարներ՝ Ջիմ Չանգալյան, Հայկ Ազատյան, Տիգրան Պոյաճյան, Ռուբեն Հերյան, Գարակոյճյան, Վահան Չուրկենց, Վաղարշակ վրդ. Արշակունի, Ջոն Շիշմանյան և այլք):

Ամերիկայի հայ ազգային միության ներկայացուցիչ Ռուբեն Հերյանն անձամբ ինքն է մասնակցել ամերիկահայ կամավորների ինքնության փաստաթղթերի պատրաստմանը Նյու Յորքի Ար. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու ներքնապահին:

Կամավորագրվածները նախնական վարժանք էին անցնում Փաթերսոնում (Նյու Ջերսիի նահանգ), զրանցվում՝ Նյու Յորքում, ապա նավով մեկնում Բորդո կամ Մարսել (Ֆրանսիա), ապա՝ Պորտ Ափո (Եգիպտոս) կամ Մոնարկա (Կիպրոս)՝ զինվելու և ամիսներով վարժանքներին մասնակցելու:

Ամերիկահայ կամավորներն «Արևելյան լեգեոնի» իրենց քաջարի հայրենակիցների հետ միասին լուրջ ավանդ են ներդրել 1918 թ. սեպտեմբերի 19-ին Պաղեստինում՝ Արաբայի անառիկ բարձունքների վրա գերմանա-թուրքական բանակին պարտության և նահանջի մատնելու գործում: Արաբայում զոհվեց 22 և վիրավորվեց ավելի քան 70 հայ: Այնուհետև լեգեոնականները մասնակցել են Սիրիայի և Լիբանանի համար մղված մարտերին, որտեղ, սիրիական զորամիավորների անջատումով, «Արևելյան լեգեոնը» վերանվանվել է «Հայկական լեգեոնի» (Legion Armenienne): Լեգեոնական լեյտենանտ Վահան Փորթուզալյանի բնորոշմամբ. «Հայկական լեգեոնը», որպես զինյալ բանակ, բառիս իրական և ամբողջական իմաստով, առաջին հայկական ռազմական ուժն էր, որը ստեղծվել էր դարեր անց պետական սկզբունքների հիման վրա»:

1918 թ. հոկտեմբերի 30-ին Մեծ Բրիտանիայի և սուլթանական Թուրքիայի միջև կնքված Մուդրոսի զինադադարն ամրագրեց Օսմանյան կայսրության կապիտուլյացիան, և 16-րդ հոդվածի համաձայն թուրքական զորքը պետք է դուրս բերվեր Կիլիկիայից: 1918 թ. դեկտեմբերի 17-19-ին Հայկական լեգեոնը ոտք է դնում բաղձալի Կիլիկիա՝ վերահսկելու և պաշտպանելու սորտաբեկական հեմակետեր, հայաբնակ Ադանան, Այնթապը, Մարաշը, Ուրֆան, Հաճընը: Արդյունքում, Հայոց ցեղասպանության հետևանքով Կիլիկիայից տեղահանված շուրջ 120.000 հայ վերադառնում է իր հայրենի օջախները՝ հույսով, որ անգլո-ֆրանսիական ուժերի պաշտպանության ներքո խաղաղությամբ կվերականգնեն իրենց ընդհատված կյանքը Կիլիկիայում: Սակայն ➤6

ՍԵԿՈՒՆԴՈՒ ՊԻԱՅԻ ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Ուղիղ հարյուր տարի առաջ լուսանկարիչ Սեկունդո Պիան պատասխանատու հանձնարարություն ստացավ՝ լուսանկարել Տիրոջ պատանքը, որը պահվում էր Իտալիայի Թուրին քաղաքի սբ. Հովհաննես եկեղեցում։ Ավանդույթն ասում է, որ թաղելուց առաջ այդ սավանի մեջ է փաթաթվել Հիսուս Քրիստոսի մարմինը։ Այն 4,1 մ X 1,1 մ չափերի գործվածքի կտոր է, որի վրա երևում են մուգ բծեր, և ուշադիր նայելու դեպքում կարելի է տեսնել մարդկային մարմնի ոչ հստակ ուրվագիծ։

Որքան եղավ Սեկունդո Պիայի զարմանքը, երբ երևակելով լուսանկարչական ժապավենը, նրա վրա տեսավ Հիսուս Քրիստոսի պոզիտիվ նկարը։ Ստացվում էր, որ պատանքակտավի վրա տպված էր Տիրոջ նեգատիվ պատկերը, և լուսանկարելով այն կարելի է ստանալ Քրիստոսի պոզիտիվ լուսանկարը։

Պատանքը պահպանել էր բարեկազմ տղամարդու պատկեր։ Ա-

խածնային անալիզի եղանակը, գիտնականները չափեցին գործվածքի տարիքը և... մեծ հիասթափություն ապրեցին՝ կտավը գործված է 14-րդ դարից ոչ շուտ։ Թվում էր, թե ճիշտ են թերահավատները, որոնք պնդում էին, որ պատանքի վրա ոչ թե Քրիստոսի պատկերն է, այլ մեկ ուրիշի, որը ապրել է Տիրոջից 14 դար հետո և շատ մնացել է եղել նրան։

Սակայն այս վարկածը հիմնավորապես մերժվեց պրոֆեսոր Դ. Կուզնեցովի բիոպոլիմերների լաբորատորիայում կատարված պատանքի գործվածքի հետազոտություններից հետո։ Պրոֆեսոր Կուզնեցովը միանշանակ հայտարարեց՝ պատանքը 2000 տարեկան է։

Ի դեպ, պրոֆեսոր Կուզնեցովը լաբորատորիաներ է դեկավարում Մոսկվայում և Միացյալ Նահանգներում, որտեղ կատարված պատանքի գործվածքի հետազոտության մոտ մեթոդն ու արդյունքը ընդունեց գիտական ողջ աշխարհը։

Հմադարյան մագաղաթները վկայում են, որ եղեսիայում եղել

հետ։

Սակայն հարց է ծագում՝ արդեն մահացած մարդու մեջ որտեղից է էլեկտրամագնիսական ճառագայթման մնացած վալյուն և արտատվող աղբյուր։ Իհարկե, կարելի է սույն վարկածի հեղինակին միանալ և հայտարարել, որ մարդկային մարմնի ձևով այդ ճառագայթող աղբյուրը հրաշածին էր։ Սակայն այս դեպքում, ընդհանրապես, վերանան է ինչ-որ ֆիզիկական երևույթների մասին խոսելու անհրաժեշտությունը։

ՎԿԱՅՈՒՄ ԵՆ ԱՌԱՔՅԱԼՆԵՐԸ

Ինչպես վկայում են առաքյալները, Քրիստոսին խաչ հանեցին։ Մահապատժի այդ տեսակը տառապալից էր։ Դատապարտվածները երկար ու անլուր տանջանքներ էին ապրում մինչև մահը, որ հաճախ տևում էր օրեր։ Եթե դատապարտվածի բարեկամներին հաջողվում էր թույլտվություն ստանալ դժբախտին վայր բերել խաչից, ապա լինում էին դեպքեր, որ մարդը անգամ կենդանի էր մնում։

Սակայն հայտնի է, որ Քրիստոսը քիչ է տանջվել։ Երեք ժամ հետո



ՔՐԻՍՏՈՍԻ ՊԱՏԱՆՔԻ ԱՌԵՂԾՎԱԾԸ

լիքածն մագերով պատված և կարծ մորուքով դեմքը անվորդով ու խաղաղ էր։ Մարմնի վրա հստակ երևում էին զանազան և խաչելության հետքերը։ Ճակատի վրայի չանկավածքները փշե պսակի հետքերն էին։ Կողի վրայի խորը վերքը հասցված էր ինչ-որ սուր գործիքով...

Հետագայում պատանքը նորից ու նորից լուսանկարվեց և հետազոտվեց, և Սեկունդո Պիայի հայտնագործությունը լրացվեց



նոր մանրամասներով։

Ճշտվեց նաև, որ պատանքի վրայի դաջված նկարը ստացվել է ոչ թե հարթ, այլ մարմնի ծավալային պատկերից։ Այսինքն պատկերը ստացվել է այն բանից հետո, երբ Քրիստոսի մարմինը փաթաթվել է սավանի մեջ։

Հետազոտվեց նաև պատանքի սավանը։ Մասնագետները գտան, որ կտորը համապատասխանում է այն գործվածքներին, որոնք հայտնաբերվել են Պոմպեյի և Սիրիայի հնագիտական պեղումների ժամանակ։

Մի խոսքով, ապացույցներն այնքան առատ էին և համոզիչ, որ ինքնին ստիպում էին եզրակացնել, որ Քրիստոսի պատմական անձնավորություն լինելու վկայությունները անառարկելի են։

Սակայն գտնվեցին մարդիկ, որ կասկածի տակ առան այս ամենը։

Եվ սա առաջին հերթին վերաբերում է պատանքի գործվածքի տարիքին։ Կիրառելով ռադիոած-

է Քրիստոսի պատկերը։ Քրիստոսի հետևորդները այն պահում էին խիստ զաղտնիության պայմաններում, պնդում էին, որ պատկերը ձեռակերտ չէ։ Այդ նկարը (հունարեն՝ Մանդիլիոնը) հայտնաբերվեց 525 թվականին։

Ի՞նչն է հետաքրքիրը։ Մինչև 6-րդ դարը Քրիստոսի տարածված նկարներում Քրիստոսը պատկերված է հռոմեական աստվածների արտաքինով՝ կարծ մագեր, սափրված դեմք։ Մանդիլիոնի հայտնաբերումից հետո ամենուր տարածվեց նրանից արտանկարված Քրիստոսը, այն Քրիստոսը, որ այսօր ամենուր պատկերված է սրբապատկերների վրա։

Ինչպե՞ս է պատանքը հայտնվել Եվրոպայում։ 1204 թվականին խաչակիրները արշավեցին Պաղեստին՝ արաբներից փրկելու Տիրոջ աճյունը. ճանապարհին նրանք զրավեցին, ավերեցին ու կողոպտեցին Կոստանդնուպոլիսը։ Այդ ժամանակվանից պատանքը հայտնվում է Եվրոպայում, և պատահական չէ, որ քյուզանդական քրոնիկներում 1204 թվականից հետո պատանքը այլևս չի հիշատակվում։

Հիտունալով Մանդիլիոնի հետագա դեգերումների պատմության մեջ, մշտնջ միայն, որ 1452 թվականին պատանքը հայտնվեց Թուրքիայում և վերջնական հանգրվան գտավ սբ. Հովհաննես եկեղեցում։

ՀՐԱՇՔ, ԹԵ՞ ԱՆՀԱՅՏ ԵՐԵՎՈՒՅԾ

Գիտնականները մինչև օրս հաստատ եզրակացության չեն եկել, թե ինչ կերպ է պատանքի կտավի վրա հայտնվել մարդկային մարմնի ծավալային պատկերը։ Հավանական մի վարկած առաջ քաշեց ռուս գիտնական Ա. Բեյսակովը։ Նրա կարծիքով, պատկերը կարող էր հայտնվել էլեկտրամագնիսական ճառագայթման հետևանքով՝ լայն սպեկտրալ դիսպազոնով, ընդհուպ մինչև ուլտրամանուշակագույն ճառագայթներն ու փափուկ ռենտգենը։ Սա փորձարկված և հնարավոր երևույթ է։

Այդ մուրբ վարկածով կարելի է շատ բան բացատրել՝ կապված պատանքի վրա դաջված առեղծվածային պատկերի առաջացման



նրա գլուխը հակվեց կրծքին, և աչքերը փակվեցին։ Պահապանները տեղով խոցեցին նրա կողը և համոզվեցին, որ Հիսուսը մեռած է։ Նման արագ մահը հրաշք էր։

Հենց այդ ժամանակ Պոնտացի Պիղատոսի մոտ եկավ հարուստ և հարգված մի մարդ՝ Հովսեփ Արիմաթացի, որ զաղտնի համակրում էր Քրիստոսին։ Նա կուսակալին խնդրեց թույլ տալ թաղելու մահապատժի ենթարկված Քրիստոսին։ Պիղատոսը զարմացավ, որ Քրիստոսը այդքան արագ մահացել է։ Նա կասկածեց, թե զուցե դատապարտյալը ընդամենը ուշակորույս է եղել։

Սակայն կանչված հռոմեացի սպան հաստատեց, որ մահապատիժը ի կատար է ածված, և դատապարտյալը վախճանվել է։ Կուսակալը թույլ տվեց, որ Քրիստոսի մարմինը վայր բերեն խաչից և թաղեն։

Հանգուցյալին փաթաթեցին պատանքի մեջ, տարան մի քարայր և մուտքը փակեցին ծանր ու մեծ քարե սալով։

Հաջորդ օրը շաբաթ էր, և հրեաների օրենքով պետք էր հրաժարվել բոլոր գործերից։ Կիրակի օրը, Նիսան ամսվա 16-ին կամ մերով ապրիլի 5-ին, քարայրի մոտ եկան Մարիամ Մագթաղիմացին, Պետրոս առաքյալը և Քրիստոսի մի քանի մտերիմներ։ Սակայն քարայրում նրանք Քրիստոսի դին չգտան, հատակին սավանն էր, պատանքը, որում փաթաթել էին Քրիստոսին։ Իսկ դրսում, քարի վրա նստած էր շացուցիչ ճեղմակ հագուստով մի մարդ։ Մատթեոս առաքյալը վկայում է, որ նրա տեսքը կայծակ էր հիշեցնում։

- Դուք Քրիստոսին եք փնտրո՞ւմ,- հարցրեց անծանոթը։ Նա այստեղ չէ, նա հարություն առավ։

Ապշած տեսածից ու լսածից, ներկաները մտածեցին, որ իրենց հետ խոսում է հրեշտակը։

Շատ շուտով Մարիամ Մագթաղիմացին հանդիպեց Քրիստոսին։ Նշենք, որ այս հանդիպման պատմության մեջ կա կարևոր մի պարագա, այն, որ սկզբում Մարիամը նրան դրեց այգեպանի տեղ։ Եվ երկրորդ, ոչ պակաս էական մի հանգամանք։ Երբ Մագթաղիմացին ձեռքը մեկնեց Քրիստոսին, վերջինս մահազոհվածից նրան, որ իրեն չդիպչի։

Նկատենք նաև. ութ օր հետո Քրիստոսը թույլ տվեց, որ Թովմա առաքյալը ձեռք տա իր վերքերին։

Այդ օրերին Քրիստոսը բազմիցս հանդիպեց իր աշակերտներին և հետևորդներին, որոնք, ինչպես և Մագթաղիմացին, առաջին պահ չէին ճանաչում նրան։ Ըստ երևույթին, Քրիստոսի արտաքինի մեջ կատարվել էր բավական լուրջ փոփոխություններ։ Ըստ առաքյալների, դրանից հետո հանդիպումները Քրիստոսի հետ դադարեցին։

ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՅԱՆՋՈՒՄ Ե ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ

Ավանդույթը Քրիստոսի մասին անպայման սրբություն է, և մեր մտադրությունը չէ վերանայել այն։ Այլ բան է քննական վերաբերմունքը եղած փաստերի նկատմամբ, որով զբաղվել են այնպիսի մտքի հսկաներ, ինչպես Կանտը, Հեգելը, Տոլստոյը։

Եվ այսպես, կա՞ն արդյոք բավարար հիմքեր՝ պնդելու, թե Քրիստոսը իսկապես վախճանվել է խաչի վրա։ Այս առնչությամբ առաջինը տարակուսեց Պիղատոսը, որ այս գործերում բավական հմուտ էր։ Օրիգենը այդ պարագան համարեց հրաշք։ Գուցե՞ Քրիստոսը պարզապես կորցրել էր գիտակցությունը կամ հայտնվել լեթարգիկ վիճակում (յոգերը մնան վիճակը կոչում են Դիսբուլս)։

Կան անհավաստի ավանդույթներ, որոնք հիշատակում են, որ երիտասարդ տարիներին Հիսուսը մի քանի տարի ապրել է Արևելքում և ուսանել հնդկի իմաստունների

մոտ։ Իսկ վերջիններս կատարելապես տիրապետում էին իրենց մարմինն ու սիրտը կառավարելու եղանակներին։ Թեկուզ հիշենք յոգերի ինքնատիրապետման արվեստը, որոնք ընդունակ են շատ-շատ օրեր թաղված մնալ և ապա՝ կենդանալ։ Ասենք նաև, որ մնան դեպքերում նրանց սրտի զարկերը գրեթե անհետանում են, իսկ մարմնի ջերմաստիճանը՝ նվազում։ Այդ վիճակում նրանց իսկապես կարելի է ընդունել մահացածի տեղ։

Գողգոթայի խաչելության ողբերգական իրադարձություններից մի քանի օր առաջ, Քրիստոսը, օգտվելով այն հանգամանքից, որ իր ուղեկիցները քնած են, մեմակ բարձրացավ Ֆավոր լեռը։ Հանկարծ արթնանալով, Պետրոսը և երկու ուրիշ առաքյալներ ականատես եղան ցնցող մի տեսարանի՝ Քրիստոսի դեմքն ու հագուստը ողողված էին շլացուցիչ պայծառ լույսով։

- Ոչ մեկի մի ասացեք այն մասին, ինչ դուք տեսաք։ Մինչև այն ժամանակ, երբ Մարդու Որդին հարություն կանգնի մեռելներից,- պահանջեց Քրիստոսը իր աշակերտներից։

Իսկ ո՞վ էր խորհրդավոր այն անձնավորությունը, որ հայտնեց, թե Քրիստոսը քարայրում չէ։ Գուցե, նա ինքը՝ Քրիստոսն էր։ Ինչո՞ւ էր նրա մարմինը շլացուցիչ լույսը կարող էր վնասել Մագթաղիմացուն։ Մի քանի օր անց, սակայն, ճառագայթման ուժը թուլացավ, և նրա մարմինն այլևս չէր լուսավորվում։ Եվ արդեն նրան կարելի էր ձեռք տալ ու դիպչել։ Սակայն նրա արտաքինը փոխվել էր։ Առաքյալները, որ հիմալի գիտեին իրենց ուսուցչի հարազատ դիմագծերը, չէին ճանաչում Հիսուսին։

Պատանքի առեղծվածի հետ կապված մեր մոր վարկածի տարբերությունը սրբացված ավանդույթից՝ ակնհայտ է և այն ենթադրում է, որ Հիսուսը ելավ Գողգոթա և ենթարկվեց խաչելության տառապանքներին, հաստատ իմանալով, որ ինքը կարողանալու է խուսափել մահից։ Եվ այդ նրան հաջողվեց։ Ավետարանի վկայություններից և ոչ մեկը չի հակադրվում այս վարկածին։

Մեր ասածի ուղղակի ապացույց կարող է ծառայել և պատկերի այն դաջվածքը, որ պահպանվել է պատանքի սավանի վրա։ Չէ՞ որ կենդանի մարմնի ճառագայթումը միայն կարող էր սավանի վրա ստեղծել Քրիստոսի մարմնի ծավալային պատկերը։

Կարող է արդյոք մեր այս վարկածը կասկածի տակ առնել Սուրբ ավանդույթը։ Միանշանակ՝ ոչ։ Հավատի տրամաբանությունը և իմացության տրամաբանությունը գտնվում են այնպիսի հարթությունների վրա, որոնք չեն հատվում։ Իմացության տրամաբանությունը ապացույցներ է պահանջում, իսկ հավատի տրամաբանությունը՝ դրա կարիքը չունի։

Վաղին ՊԻՄԵՆՈՎ

1. Քրիստոսի դեմքը, որ հանակարգչային մեթոդներով վերականգնվել է թուրինյան պատանքի վրա դրոշմված հետքերով։

2. Քրիստոսի մարմնի 3 մետրանոց ծավալական մոդելը՝ փաթաթված թուրինյան պատանքով. իրականացված է հանակարգչային տեխնիկայի օգնությամբ։ Հաջողվել է մարմնի վրա հայտնաբերել զանազան հետքեր։

Քաղաքագետ և փիլիսոփա Ռուբեն Բարենցը վերջերս, ռուսերենով լույս ընծայեց խիստ արժեքավոր աշխատություն՝ Հայոց ազգային գաղափարախոսության մասին: Աշխատությունը բաղկացած է հինգ ստվար հատորից, որոնց վրա հեղինակն աշխատել է ավելի քան 20 տարի: Այդ զարմանահրաշ հնգամատյանը հանրագիտարանային նշանակություն ունեցող ուսումնասիրություն է՝ բացառիկ մեծ պահանջարկ ունեցող հիմնահարցի մասին:

Ռ. Բարենցը քաջածանոթ է ժամանակակից խոշոր կրոններին, և հատկապես քրիստոնեության հիմնական վարդապետություններին, և միանգամայն կողմնակից է աշխարհի, մարդկային կյանքի և քաղաքակրթությունների Աստվածային արարչագործությանը:

Հենվելով պատմական փաստերի և իրողությունների վրա, հեղինակը հիմնավորում է, որ ոչ մի մեծ ու հզոր երկիր իր փառքի բարձունքին չի հասել՝ առանց սեփական ազգային ոգուց բխող ազգային գաղափարախոսության:



Պետրոսյանին հուժկու հարված տվեց վաղամեռիկ ալադեմիկոս Լենդրուշ Խուրշուդյանը:

Ազգային գաղափարախոսությունը, ըստ այդ մտածողների, հայոց պետության և հայ ժողովրդի համար այն միակ և հուսալի փարոսն է, որ կարող է լուսավորել մեր առաջընթացի ուղին՝ ժամանակակից խռովահույզ աշխարհում: Միայն նա կարող է փրկել աշխարհասփյուռ հայությանը տարրալուծումից, միավորել նրան իր մայր Հայրենիքի շուրջը, համատեղ ջանքերով իրականացնել մեծ ու հզոր ծրագրեր՝ հայկական երկու հանրապետությունների պաշտպանության և անվտանգության ապահովման, մեր հայրենի գիտության, մշակութային կյանքի և տնտեսության զարգացման համար, առանց որի՝ մենք կլինենք արժանապատվությունից զուրկ թշվառականներ:

Աշխարհասփյուռ լինելը, մի կողմից՝ մեծագույն չարիք է, մյուս կողմից՝ մեծագույն բարիք՝ ողջ աշխարհում հուսալի հենակետեր ունենալու համար: Հայոց ազգային գաղափարախոսությունը պետք է

Նոր խոսք՝ ազգային գաղափարախոսության մասին

րախոսության: Այդպիսի իմաստուն գաղափարախոսություններ հանդիսացան կոնֆուցիականությունը Չինաստանում, որն ունի 2500 տարվա պատմություն, Գանդիի՝ չարիքին չդիմանալու ազգային-ազատագրական շարժման ուսմունքը Հնդկաստանում, Պսկովի ելիզարովա վանքի վանական Ֆիլոֆեյի հայեցակարգը՝ «Մոսկվա-Երրորդ Ռոմն է» հայեցակարգը և այլն:

Ռ. Բարենցն իր աշխատությանը հակադրվում է ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանին և նրա համախոհներին, ովքեր համառոտ են պնդում էին, թե «ազգային գաղափարախոսությունը կեղծ կատեգորիա է», այն մեզ պետք չէ, և փորձեցին երկիրը կառավարել՝ առանց «ղեկի ու կողմնացույցի», առանց մերձավոր խնդիրների կշռադատելու և ապագան տեսնելու: Ահա այդ մեծ պակասը լրացնելու մտահոգությամբ է գրված նշված հնգամատյանը: Հիշենք, որ սրանից 15 տարի առաջ, ազգային գաղափարախոսության մերժողականության հարցում Լ. Տեր-

օգնի ողջ հայության ջանքերը միավորելու և այդ ազգային չարիքը մեծագույն ազգային բարիք դարձնելու գործում:

Մեր ազգային գաղափարախոսությունը պետք է օգնի մեզ՝ ձերբազատվելու հանրապետության կառավարման ոլորտում հայտնված ազգադավ, ընչաքաղց, դեգեներատիվ տարրերից և ասպարեզ բացել հավատով և իմաստությամբ առեցնուն, արարչագործ և նվիրական հայրդրիների համար:

Ըստ Ռ. Բարենցի՝ հայ ժողովրդի փրկության գործոններ են՝ մեր հավատը, ազգային ոգին, ընտանիքը և հայ դպրոցը, և այդ բոլորը միավորող՝ Հայոց ազգային գաղափարախոսությունը:

Մտածողի իդեալական պետությունը՝ քրիստոնյա սոցիալիստական պետությունն է՝ խարսխված ազատության, հվասարության, արդարության, սիրո և համերաշխության սկզբունքների վրա:

Սարգիս ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ նախագահության անդամներին ներկայացվեցին Գիտակրթական միջազգային կենտրոնի ձեռքբերումները

ՀՀ կրթության և գիտության նախարարության «Կրթական ծրագրերի կենտրոն»-ի «Կրթության ուրակ և համապատասխանություն» երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում Հայաստանի բարձրագույն կրթության նորարարությունների մրցակցային հիմնադրամի ֆինանսավորմամբ հեռավար կրթության ամփոփիչ սեմինարի շրջանակներում տեղի ունեցավ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության անդամների այցը ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի (ԳԿՄԿ) առցանց տեսակոնֆերանսների դահլիճ՝ ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանի գլխավորությամբ:

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնօրեն Ալբերտ Սարգսյանը ներկայացրեց ԳԿՄԿ-ի գործունեությունը, հիմնական ձեռքբերումները և նվաճումները, այնուհետև անդրադարձավ հեռավար ծրագրի իրականացմանը և արդյունքներին:

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տեղեկատվական տեխնոլոգիաներ բաժնի ղեկավար Արմեն Սարգսյանը ներկայացրեց առցանց տեսակոնֆերանսների դահլիճի տեխնիկական հնարավորությունները:

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ արտաքին կապերի բաժնի ղեկավար Արուսյակ Հարությունյանը ներկայացրեց հեռավար ուսուցման հարթակը, հեռավար դասընթացների կառուցվածքը, ինչպես նաև ներկայացվեց ուսանողների հարցման արդյունքները, մասնավորապես ուսանողների կարծիքները և առաջարկները հեռավար կրթության և դասընթացների վերաբերյալ:

ՀՀ ԳԱԱ նախագահության անդամները և ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը բարձր գնահատեցին հեռավար կրթության ոլորտում կենտրոնի կատարած աշխատանքները և հեռավար կրթության ընձեռած հնարավորությունները:

ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոն

ԿԻԼԻԿԻԱՎՅՈՒԹՅՈՒՆԸ...

➤ 1919 թ. մայիսի 1-ին անգլիական, իսկ 1920 թ. հունվարի 18-ին ֆրանսիական զորամիավորումները հեռանում են Կիլիկիայից՝ հային «յանձնելով իր անագորոյն թշնամիին ձեռքը»:

1920 թ. Մարաշում, Սիսում, Պոզանթոնում, Ուրֆայում, Այնթապում (ընդհատումներով 314 օր), Հաճընում (8-ամսյա գոյամարտ) հայ զինվորն ու ժողովուրդը հերոսական դիմադրություն են ցույց տվել քեմալական հորդանքներին, սակայն զոհերի թիվը գերակշռե էր:

1921 թ. հոկտեմբերի 20-ին Անկարայում կնքված ֆրանս-քեմալական դաշ-

նագրով Ֆրանսիան պաշտոնապես ամրագրեց իր նահանջը՝ Կիլիկիան թողնելով թուրքական տիրապետության ներքո՝ միաժամանակ, վերջինիս տրամադրելով մեծ քանակությամբ զենք, զինամթերք, հանդերձանք և այլն:

Կիլիկիայի պարսկալուծ հայերին ստիպեց կրկին արտագաղթել: Պատմաբան Լեոն այս առիթով գրել է. «Կիլիկիան դատարկվում էր հայությունից, ինչպես դատարկվել էր բուն Հայաստանը»:

Արաբայի հերոսամարտից 20 տարի անց Ֆրանսիան թուրքիային է հանձնել նաև մինչ այդ ֆրանսիական հովանավորության տակ գտնվող Կիլիկիայի վերջին պատվարը՝ Ալեքսանդրետի Սանջակը:

Միսաք Քելեշյանի բնորոշմամբ. «Ֆրանսան իր վարկը կորսնցուց Արեւելքի մեջ: 1938ին Ալեքսանդրետը թուրքերուն լքելէ վերջ, 1946ին ալ ստիպուեցան պարպել Սիրիան և Լիբանանը շատ ամոթալի պայմաններու ներքե: Մե՛ղբ հին ազնիւ Ֆրանսային»:

Թեև Կիլիկիայի ազատագրման համար գործադրած ջանքերը վերջին հաշվով ձախողվեցին, այդուհանդերձ, անուրանալի էր նաև ամերիկահայ կամավոր երիտասարդության մասնակցության նշանակությունը «Արևելյան լեգեոնի» («Հայկական լեգեոն») ձեռք բերած մարտական հաջողությունների գործում:

Այնպես որ հայ ժողովրդի համար ճա-


կատագրական դարձած Առաջին աշխարհամարտին և հաջորդող տարիներին ամերիկահայությունը, մասնավորապես նաև կիլիկիահայությունը, համախմբելով իր ներգաղութային ողջ մտավոր, նյութական, հասարակական, կուսակցական և այլ կարողությունները, դիվանագիտական, քաղաքական, ռազմական, մարդկային և հնարավոր բոլոր միջոցներով սատարել է հայրենի երկրի ու ժողովրդի պաշտպանության, ազատագրության ու վերականգնման նվիրական գործին:

Քնարիկ ԱՎԱԳՅԱՆ
Պատմական գիտությունների
թեկնածու, ՀՀ ԳԱԱ պատմության
ինստիտուտի ավագ
գիտաշխատող

ՎԼԱԴԻՄԻՐ ՆԱՎԱՊԵՏԻ ՂԱԶԱԽԵՑՅԱՆ

Հայ պատմագիտական հանրությունը անդառնալի կորուստ կրեց. կյանքի 89-րդ տարում մահկանացուն կնքեց նշանավոր պատմաբան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վլադիմիր Նավապետի Ղազախեցյանը:

Վ. Ղազախեցյանը ծնվել է 1926 թ. փետրվարի 11-ին Հայաստանի Ղարաքիլիսա գյուղաքաղաքում (այժմ՝ Վանաձոր): Միջնակարգ կրթությունը ստացել է ծննդավայրում: 1944-1949 թթ. սովորել և գերազանցությամբ ավարտել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: 1949-1952 թթ. ուսումնառություն է անցել ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի ասպիրանտուրայում՝ ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյանի ղեկավարությամբ: 1953 թ. պաշտպանել է թեկնածուական, իսկ 1976 թ.՝ դոկտորական ատենախոսություն Հայաստանի գյուղացիության պատմության վերաբերյալ: Պրոֆեսորի կոչում է ստացել 1982 թ.:



Մեծանուն գիտնականն աշխատանքային գործունեությունը սկսել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում՝ որպես կուրսակցության պատմության դասախոս (1953-1959 թթ.): 1959 թ. աշխատանքի է անցել ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտում, սկզբում որպես ավագ գիտական աշխատող, այնուհետև՝ 30 տարի շարունակ (1980-2010 թթ.), որպես նորագույն պատմության բաժնի վարիչ, 2010-2015 թթ. զբաղեցրել է գլխավոր գիտական աշխատողի պաշտոնը: Համատեղությամբ դասավանդել է Երևանի գյուղատնտեսական ինստիտուտում, նաև՝ Երևանի «Քվամո» վարժարանում:

Մեծ է Վ. Ղազախեցյանի ներդրումը ժամանակակից պատմագիտության մեջ: Անկախ պետականության հաստատման շնորհիվ փակ արխիվային ֆոնդերի բացումը լայն հնարավորություններ ստեղծեց պատմական գիտության զարգացման համար: Նա առաջիններից էր, որ նվիրվեց ուսումնասիրելու և գիտական շրջանառության մեջ դնելու խորհրդային պետական անվտանգության մարմինների, դատախազության, արտաքին գործերի նախարարության և այլ ֆոնդերի փաստաթղթերը, որը մեծապես բարձրացրեց պատմական իրականության ճշմարտացի վերարտադրման մակարդակը, ինչպես նաև հետաքրքրությունը պատմական գրականության նկատմամբ:

Նրա գիտական գործունեությանը բնորոշ էր խստապահանջությունը և բարեխիղճ մոտեցումը պատմական ճշմարտությանը: Դա վերաբերում է նաև խորհրդային ժամանակաշրջանի գիտական մշակումներին: Լավագույնս տիրապետելով արխիվային նյութերի՝ նրա գիտական գործերը աչքի են ընկնում փաստաթղթերի ու նյութերի հարստությամբ, դրանցից բխող ընդհանրացումներով ու եզրակացություններով:

Պրոֆ. Վ. Ղազախեցյանի գիտական գործունեության արդյունքներն ամփոփված են շուրջ 30 գրքերում և 100-ից ավել հոդվածներում:

Վ. Ղազախեցյանը գործուն մասնակցություն է ունեցել հանրապետության պատմաբան կադրերի պատրաստմանն ու կատարելագործմանը:

Մեր ավագ գործընկերոջ՝ վաստակաշատ գիտնական, մանկավարժ և պարզապես լավ ու բարի մարդ Վլադիմիր Նավապետի Ղազախեցյանի հիշատակը մշտապես վառ կմնա ինստիտուտի աշխատակիցների և բոլոր նրան ճանաչողների սրտերում: Իսկ նրա թողած պատկառելի գիտական ժառանգությունը, համոզված ենք, իր մնայուն տեղը կունենա հայրենի պատմագիտության մեջ՝ մեծապես նպաստելով վերջինիս առաջընթացին:

ՀՀ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ամուլսարի հանքավայրը տեղադրված է նույնանուն սարի գագաթային մասում, Կաքավասար կոչվող ոսկի-բազմամետաղային հանքավայրի վերին հորիզոններում: Ամուլսարը բաժանում է Վայոց-Ձորի մարզը (Վայքի շրջանը) Սյունիքի մարզից (Սիսիանի շրջանից):

Ամուլսարի հանքավայրը հետախուզվել է 2004 թվականից, որի պաշարներն էլ հաստատվել են մի քանի անգամ: Առաջին անգամ 2006թ. հաստատվել են միայն ոսկու պաշարները, որոնք կազմել են 20014,9կգ (հաշվեկշռային և արտահաշվեկշռային): Արծաթի և այլ օգտակար տարրերի պաշարներ չեն հաստատվել:

Վերջին անգամ այս հանքավայրի պաշարները հաստատվել են 2013թ. դեկտեմբեր ամսին: «Դելովոյ Էքսպրես» շաբաթաթերթում (19.09.2014թ.) տպագրված «По миллиарда инвестиций в добычу золота» հոդվածում հանքավայրի գլխավոր տնօրեն, միևնույն ժամանակ այդ հանքավայրի հետազոտող-երկրաբան Հայկ Ալոյանն ասել է՝ «Հանքավայրի հաստատված

դեպը չունեցող չափերով, թափանցիկ: Ասեմք նաև այն, որ ագնիվ մետաղները հանքաքարերից կորզվելու են կուտակային տարրալուծման եղանակով, ասել է, թե հանքավայրից արդյունահանված հանքաքարերը փշրման ու մանրացման ենթարկելուց հետո կուտակվելու են Վայքի շրջանի Գնդեվազ գյուղին պատկանող հողատարածքում, և կալիումի կամ մատրիումի ցիանիդ կոչվող՝ ուժեղ թունավոր, նյութերի օգնությամբ տարրալուծվելու են ագնիվ մետաղները



պարունակություններն էլ նույնքան անգամ ցածր են դրանց իրական պարունակություններից: Բայց, եթե անգամ ընդունենք, որ այդ պարունակությունները ճիշտ են կամ մոտ են իրականությանը, ապա դրանց մոտավոր քանակները՝ հաշվարկված մեր կողմից, կարող են կազմել. թալիումինը՝ 612տ, մկնդեղինը՝ 2708,7տ, բերիլիումինը՝ 162,8տ, բիսմութինը՝ 235,6տ, կադմիումինը՝ 178,7տ, կոբալտինը՝ 2200,7տ, քրոմինը՝ 1358,6տ, պղնձինը՝ 12379,5տ, երկաթինը՝ 7.350.120տ, գալիումինը՝ 1391,7տ,

ԸԸ Ամուլսարի ոսկու հանքավայրի շահագործման հիմնախնդիրները

պաշարները ոսկու գծով կազմում են 2,5 միլիոն ունցիա, իսկ կորզվող ոսկունը՝ 2,1 մլն ունցիա»: Գիտեմալով, որ այս հանքավայրը հետախուզվել է Մեծ Բրիտանիայի «Lidian International» միավորման կողմից, մենք մտածում ենք, որ պաշարներն էլ գնահատվել են անգլիական ունցիայով, որը կազմում է 28,3495236գ: Վերահաշվարկները պարզել են, որ ՀՀ պաշարների գործակալության կողմից հաստատված ոսկու պաշարները կազմում են 70873,8 կգ, իսկ կորզվող ոսկու քանակը՝ 59.534կգ:

Արծաթի պարունակությունը (ըստ Հ.Ալոյանի) կազմում է 3,5գ/տ, հետևապես արծաթի հաստատված պաշարների քանակն էլ կազմում է 428,4տ (կկորզվի՞ արծաթը, թե ոչ, այժմ դեռևս հայտնի չէ):

Հ.Ալոյանի հայտարարության համաձայն ոսկի պարունակող հանքաքարերի պաշարները կազմում են 122,4 մլն տ, իսկ ոսկու միջին պարունակությունը՝ 0,77գ/տ: Այս տվյալներով հաշվարկելիս ոսկու պաշարների քանակը ստացվում է 94248 կգ, այլ ոչ թե 70783,8կգ: Պարոն Ալոյանը, հավանաբար, սխալվել է ոսկու միջին պարունակությունը գնահատելիս և 0,5783 գ/տ փոխարեն ասել է 0,77 գ/տ:

Ինչևհետև. Ամուլսարի հանքավայրը պատրաստ է շահագործման և Հ.Ալոյանի հայտարարության համաձայն հանքավայրը շահագործվելու է բացահայտ եղանակով և դրա ընդերքից տարեկան արդյունահանվելու ու մշակվելու է 10 մլն տ հանքաքար (ինչո՞ւ այդպես շատ, ինչո՞ւ է ՀՀ կառավարությունը թույլատրում մեր ժողովրդին պատկանող հարստությունն այսպես՝ նախա-

և դուրս են բերվելու հանքաքարերից: Տարեկան մշակվող 10 մլն տ հանքաքարերում առկա 5790կգ ոսկուց կորզվելու է 4863,6կգ, որը կազմում է 10 մլն տ հանքաքարերի 0,000049 տոկոսը (10 մլն տ հանքաքարից ոսկու կորզումից հետո մնացած մասը՝ 9999995,136կգ թափվելու է Գնդեվազ գյուղին պատկանող հողատարածք՝ Ամուլսարի արևմտյան լանջի վրա): Այդպես կատարվելու է անընդհատ 10 տարի և 4 ամիս:

Այժմ նշենք այն մասին, թե նշված քանակի հանքաքարերի հետ էլ ինչպիսի տարրեր և ինչ քանակներով են թափվելու Ամուլսարի արևմտյան լանջերին:

Ամուլսարի հանքային մարմինն չպատկանող (հավանաբար մակաբացման ապարներից պատկանող տարածքից) վերցված 40՝ հանքային մարմնին ոչ բնութագրական, մոլորների անալիզներով պարզվել է, որ ագնիվ մետաղներից բացի, հանքաքարերում առկա են նաև 26 ծանր մետաղներ և թունահարույց հատկություններ ունեցող տարրեր: Դրանք են ալյումինիումը, մկնդեղը, բերիլիումը, բիսմութը, կադմիումը, կոբալտը, քրոմը, պղինձը, երկաթը, գալիումը, մոլիբդենը, միկելը, կապարը, ծարիրը, սկանդիումը, ստրոնցիումը, թորիումը, տիտանը, թալիումը, ուրանը, վանադիումը, վոլֆրամը, ցինկը, սնդիկը, սելենը, տելուրը և այլն:

Նշված 40 ոչ բնութագրական մոլորների տարածքում առկա ոսկու միջին պարունակությունը՝ 0,0048 գ/տ, հաշվեկշռային պաշարներում ունեցած 0,5783 գ/տ պարունակությունից ցածր է ավելի քան 120 անգամ, հետևապես մենք իրավունք ունենք մտածելու, որ նշված տարրերի

միկելինը՝ 1567,9տ, կապարինը՝ 3678,1տ, ծարիրինը՝ 1960,8տ, սկանդիումինը՝ 1687,9տ, ստրոնցիումինը՝ 55.529,2տ, տիտանինը՝ 437.580տ, ուրանինը՝ 918տ, վանադիումինը՝ 19.565,6տ, ցինկինը՝ 66.830,4տ, սնդիկինը՝ 329տ, վոլֆրամինը՝ 673տ, որոնց ընդհանուր քանակը կազմում է 7.961.664,8տ (ոսկու չկորզվող մասի՝ 16%-ի՝ 11.340կգ և այստեղ չթվարկված տարրերի հետ միասին այդ ընդհանուր քանակը կարող է գերազանցել 8 մլն տ): Եվ այս բոլորը 122,3999 մլն տ փշրված ու մանրացված ապարներում թափվելու է Ամուլսարի լանջերին: Ամուլսարի լանջերին է թափվելու նաև 342,72 մլն տ մակաբացման ապարները՝ փշրված տեսքով, որոնց մեջ էլ կարող է լինել վերը նշված ծանր մետաղների և թունահարույց տարրերի ավելի քան 22 մլն տ քանակություն:

Որտե՞ղ են թափվելու այս բոլորը (ստույգ տեղը) հայտնի կդառնա հանքավայրի շահագործման նախագիծը ստանալուց հետո, որը՝ Հ.Ալոյանի հայտարարությամբ, պետք է լիներ հոկտեմբերի վերջին:

Ամուլսարի ոսկու հանքավայրից զագաթային մասից, ընդամենը 5 կմ հեռավորության վրա է տեղադրված նույնանուն ուրանի հանքաերակումը, որը, միևնույն ժամանակ հանդիսանում է ոսկու տեղամասի հյուսիսարևմտյան շարունակությունը: Ուրանի հանքայնացման չափերը՝ տարածման և անկման ուղղությամբ, որոշված չեն և չի բացառվում, որ ոսկու տեղամասի շահագործման ժամանակ հյուսիսարևմտյան մասում չփվեն ուրանի հանքայնացման հետ: Այդ մասին են վկայում՝

1. ուրանի հանքայնացման առկայությունը ոսկու հանքա-

նացման տարածքում,

2. ռադոն գազի առկայությունը Գնդեվազ գյուղի տարածքում:

Կատարված նկարագրությունների արդյունքով առաջանում է մի շատ բնական հարց՝ շահագործե՞լ Ամուլսարի հանքավայրը, թե՞ ոչ: Եվ, երկրորդ հարցը՝ ի՞նչ հետևանքներ կարող է ունենալ այդ հանքավայրի շահագործումը շրջակա միջավայրի վրա:

Ամուլսարի հանքավայրի հակիրճ նկարագրությունից տեսանելի է, որ չնայած պաշարների մեջ հաստատված են միայն ու միայն ագնիվ մետաղները՝ ոսկին և արծաթը (2006թ. հաստատված պաշարների մեջ տեղ չէր գտել նույնիսկ արծաթը), այնուամենայնիվ այդ հանքավայրի հանքաքարերում ագնիվ մետաղներից բացի հայտնաբերված են ևս 26 այլ հարակից տարրեր՝ ծանր մետաղներ (բիսմութ, կադմիում, կոբալտ, քրոմ, պղինձ, երկաթ, գալիում, մոլիբդեն, միկել, կապար, ծարիր, սկանդիում, ստրոնցիում, տիտան, ուրան, վանադիում, վոլֆրամ, ցինկ) և թունահարույց տարրեր (մկնդեղ,

պես դեպի Ջերմուկ քաղաք, այնպես էլ դեպի արևելք՝ Սիսիանի շրջանի գյուղերն ու քաղաքները: Նստելով կերաբույսերի վրա, թափանցելով բնակարաններ ու նստելով սննդամթերքների ու ջրի վրա, ինչպես նաև շնչելով հետք թափանցում են մարդկանց օրգանիզմ: Անհրաժեշտ է նաև նկատի ունենալ, որ Ամուլսարի զագաթային մասում քամիները մշտապես անպակաս են: Ջերմուկ քաղաքի բնակչությանը սպառնացող վտանգները կապված են այդ ծանր մետաղների ու թունահարույց տարրերի նրբա-հատիկ փոշիների հետ, որոնք օդի հոսանքների օգնությամբ հասնելու են Ջերմուկ քաղաք:

Ամուլսարի հանքավայրի շահագործման հետևանքով որոշակի վտանգ է սպառնում նաև Սևանա լճին: Նշված ծանր մետաղների ու թունահարույց տարրերի նրբա-հատիկ փոշիները նստելով Արփա գետի Կեչուտի ջրամբարի՝ դեպի Սևանա լիճ հոսող ջրերի վրա, Կեչուտի թունելով կարող են հասնել մինչև Սևանա լիճ: Ի՞նչ կլինի Սևանի հետ, այժմ դժվար է գնահատել, բայց, որ դրանից լավ բան չի սպասվում, հասկանալի է ամենքին:

Ագնիվ մետաղների կորզումը հանքաքարերից կատարվելու է կուտակային տարրալուծման եղանակով, որն իր մեջ ներառում է հետևյալ գործողությունները. Գնդեվազ գյուղին պատկանող հողատարածքներում կատարվելու են հանքաքարերի փշրման ու մանրացման աշխատանքներ, փշրված ու մանրացված ապարները կուտակվելու են Ամուլսարի արևմտյան մասի թեք լանջերի ինչ-որ տեղամասում, և դրանց վրա են լցվելու կալիումի կամ մատրիումի ցիանիդներ, որոնք էլ տարրալուծելով ագնիվ մետաղները, դուրս են բերվելու դրանք և հավաքվելու են ցիանիդների ազդեցության նկատմամբ չեզոք տարաների մեջ: Այդ լուծույթներից ագնիվ մետաղները կորզվում են ցինկով տեղակալելու օգնությամբ: Այդ գործողությունների հետևանքով Գնդեվազ գյուղին պատկանող ամբողջ հողատարածքները վառակված են լինելու ծանր մետաղների, թունահարույց տարրերի և ցիանիդների մնացորդներով: Հենց դա է պատճառը, ինչպես նաև աշխատատեղեր ունենալու համար, հանքաշահագործող ձեռնարկությունը բարձր գներով գնել և գնում է Գնդեվազի բնակչությանը պատկանող հողատարածքները՝ այդպիսով, բանջարանոցները, խոտհարքներն ու արոտավայրերը, իսկ այդ բոլորի հետևանքով Գնդեվազ գյուղի բնակչությունը չի ունենալու գյուղատնտեսությամբ զբաղվելու որևէ տարածք. հողագործությունը բացառվում է, անասնապահությունը բացառվում է, բանվորական աշխատատեղեր կլինեն մի քանի տասնյակ տղամարդկանց համար և վերջ: Գնդեվազ գյուղը ստիպված է տեղահանվել (այդ գյուղում մնացող բնակչության, հատկապես կանանց և երեխաների, կյանքը վտանգի տակ է լինելու կորգա-թափոնների և մակաբացման ապարների մեջ առկա

ԸԸ Ամուլսարի ոսկու...

➤7 թունավոր տարրերի և ծանր մետաղների ազդեցությամբ հետևանքով, ինչպես նաև օդի հոսանքներով՝ Ամուլսարի գագաթին գործող բացահանքի տարածքից Գնդեվազ հասնող ծանր մետաղների և թունահարույց տարրերի փոշիների ազդեցությամբ): Քիչ վտանգավոր չեն լինելու ցիանիդների մնացորդները, որոնք կարող են տարածվել շրջակայք և թունավորել միջավայրը: Եթե Գնդեվազ գյուղի բնակչության տեղահանությունը կատարվելու է արագ, մի քանի տարվա ընթացքում, ապա Ջերմուկ քաղաքի բնակչությունը նույն արագությամբ չի տեղահանվի: Այդ բնակչությունը՝ ենթարկվելով ծանր մետաղների և թունահարույց տարրերի մահաբեր վտանգին, զգալով այդ վտանգը սեփական օրգանիզմի վրա, կարող է տեղահանվել դանդաղ՝ մաս-մաս և տարիների ընթացքում:

Ոչ պակաս վտանգների են ենթարկվելու Արփա գետի հոսանքով Գնդեվազ գյուղից ցած գտնվող գյուղերի ու բնակավայրերի բնակիչները, որոնք ենթարկվելով մի քանի միլիոն տոննաներով կորզաթափոնների և մակաբացման ապարների մեջ առկա ծանր մետաղների և թունահարույց տարրերի մահաբեր վտանգի ազդեցությանը, տեղահանության կարող են ենթարկվել շատ ավելի դանդաղ:

Կորզաթափոնները (ավելի քան 122 մլն տ քանակով) և մակաբացման ապարները (ավելի քան 342 մլն տ քանակով) Ամուլսարի արևմտյան լանջերին ու ձորակներում մնալու են ընդմիշտ՝ հազարավոր տարիներ և իրենց մահաբեր վտանգի տակ են պահելու Վայոց-Ձորի մարզի բնակչությանը, ովքեր սնվում են Արփա գետով ջրվող միջոց ու բանջարեղենով (բնական տեղումները՝ տարրալուծելով կորզաթափոնների ու մակաբացման ապարների մեջ պարունակվող ծանր մետաղներն ու թունահարույց տարրերը, դրանք բերելու են Արփա գետի ջրեր և այդ ջրերից էլ անցնելու են կերաբույսերի մեջ ու մարդկանց օրգանիզմ: Եվ, թե ինչ կլինի այդ մարդկանց հետ, կհայտնաբերվի տարիներ անց):

Ոչ մասնագետ մարդու համար անհասկանալի է այն, թե ի՞նչ է նշանակում մի հանքավայրի ընդերքից տարեկան 10 մլն տ հանքաքարի արդյունահանումն ու նշակումը և ի՞նչ հետևանք կարող է ունենալ դա շրջակա միջավայրի բնակչության և բուն հանքավայրի համար: Բայց, մասնագետին այդ ամենը պարզ ու հասկանալի է: Մենք



շրջակա բնակավայրերի բնակչությանը սպառնացող վտանգների մասին արդեն իսկ խոսել ենք: Այժմ խոսենք հանքավայրի ճակատագրի մասին: Ինձ համար զարմանալի ու խիստ զայրացուցիչ է այն, որ այդ, այսպես կոչված, Ամուլսարի հանքավայրը, ի վերջո շահագործվելու է և, առավել զարմանալի ու զայրացուցիչ է այն, որ ՀՀ կառավարությունը թույլատրել է դրա ընդերքից տարեկան արդյունահանել 10 մլն տ հանքաքար, որի պարագայում հանքավայրը շահագործվելու է 10 տարվա ընթացքում (նման հանքավայրերը շահագործվելու պարագայում պետք է շահագործվեն 200 և ավելի տարիներ): Ոսկին (միգուցե նաև արծաթը) տարվելու է դուրս (Անգլիա)՝ մեր ժողովրդին թողնելով պոչամբարներում կուտակված մահաբեր թույնը՝ ծանր մետաղներն ու թունահարույց տարրերը ուրանով հանդերձ: Եվ այս հանգամանքն էլ վկայում է այն մասին, որ մեր ժողովրդին պատկանող հարստությունը շահագործվելու է թալանչիական եղանակով, բարբարոսաբար, շատ արագ, թունավորելով շրջակա միջավայրը՝ Վայոց-Ձորի մարզի բնակչության մի պատկառելի մասին:

Ինչո՞ւ..., ո՞րն է այդպիսի հապճեպ շահագործման համար թույլտվություն տալու պատճառն ու հիմնավորումը: Սա ի՞նչ թշնամություն ու դավաճանություն է մեր ժողովրդի հանդեպ, ո՞վ է այս թշնամության հեղինակը, ի՞նչ հեռահար նպատակներ են հետապնդում այն անձինք, ովքեր ջուր են լցնում թուրքի ջրաղացին:

Ես այս հարցերին պատասխանել չեմ կարող: Դրանց պատասխանները թողնում են ՀՀ կառավարությանը:

Յ.Ս.Ավագյան,
Երկրաբանահանքաբանական
գիտությունների դոկտոր

Սերգո Հայրապետյանը վերընտրվեց «ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնում

Մարտի 4-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունը Գյումրիի «ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնում միաձայն վերընտրեց բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սերգո Հայրապետյանին:

Սերգո Հայրապետյանն իր ելույթում ներկայացրեց Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի վերջին հինգ տարվա գործունեությունը:

Կենտրոնի հիմնական գիտական ուղղություններն են՝

- Նորահայտ հնագիտական հուշարձանների հետազոտություն մարզի տարածքում
- Ախուրյան գետի ավազանի մ.թ.ա. I հազարամյակի հնագույն պատմության հիմնախնդիրներ
- Շիրակի նոր և նորագույն պատմության մի շարք վիճահարույց հարցեր
- Աղետի գոտու ազգահոգեբանական հետազոտություններ
- Շիրակի ժողովրդական երաժշտություն և կոմպոզիտորական ժառանգություն, Ալեքսանդրապոլի աշուղական դպրոցի պատմություն
- Շիրակի արդի խոսվածքներ:

ՀՀ ԳԱԱ նախագահության միատուն նշվեց, որ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնը դարձել է Շիրակի մարզի պատմամշակութային ակտիվ կյանքի անբաժանելի մասը: Կենտրոնը կազմակերպել է միջազգային գիտաժողովներ, գիտարշավներ Վանի Սբ. Խաչ եկեղեցի, Անիի Մայր տաճար, Երիտասարդ գիտնականի հանրապետական դպրոց, «Հացի փառատոներ»՝ մարզի գյուղական և քաղաքային համայնքների, այլ մարզերի, ազգային փոքրամասնությունների մասնակցությամբ, ժողովրդական երաժշտության միջազգային փառատոն, թեմատիկ սեմինարներ և գիտական ընթերցումներ, ամենամյա հայագիտության դասեր քաղաքի զինմասերում և կրթօջախներում:

ՀՀ ԳԱԱ Տեղեկատվական-վերլուծական կենտրոն

Հեղափոխության անկյուն

Մ. ԶՈՇՉԵՆԿՈ

ԴԻՈԳԵՆԵՍԸ ԵՎ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱԿԵԴՈՆԱՅԻՆ

Ահա պատմական մի եղելություն հույն նշանավոր փիլիսոփա Դիոգենեսի կյանքից, այն Դիոգենեսի, որ երկար ժամանակ՝ ապրեց տակառի մեջ:

Նա Սինոպ քաղաքից էր: Եվ այնտեղ նա ասաց մարդկանց.

«Պետք է ապրել այնպես, որ կյանքից կախված չլինես»: Նա մեծ անհատականություն էր:

Երկար չտևեց նրա անկախ կյանքը, ինչ-որ մեկը նրան վաճառեց գերության:

Բայց նա իրեն հետ գնեց և ահա այն տարին, որի մասին հիմա խոսք է գնում, ապրում էր, ինչպես ասում են՝ մի կերպ, կորնթոսցի իր մեկ ծանոթի մոտ:

Եվ շուտով նրա խելքի մասին սկսեցին խոսել ամենուր, և մարդիկ ամեն կողմից գալիս էին նրան տեսնելու:

Դիոգենեսի մասին խոսք ու գրույցը հասավ նաև աշխարհակալ Ալեքսանդր Մակեդոնացուն: Իսկ նա նույնպես մեծ անհատականություն էր, հանձարեղ մարդ էր, խիզախ, ջախել, եռանդուն:

Եվ նա անպայման ուզեց խոսել փիլիսոփայի հետ:

Նա ցանկացավ հոգալ նրա մասին: Մի ինչ-որ լավ բան անել

նրա համար:

Եվ այդ նպատակով իր ամբողջ շքախմբով ժամանեց Կորնթոս և շարժվեց այն կողմը, ուր ապրում էր փիլիսոփան:

Պատկերացնո՞ւմ եք տեսարանը:

Շքեղ հեծելախումբը մոտենում է Դիոգենեսի տանը: Ջահել համհարզը փայլեցնելով իր խույրը, դիմում է այդտեղ հավաքված մարդկանց:

- Լսեցե՞ք... Արդյոք այստեղ չի՞ ապրում այն մարդը... Ո՞նց են ասում նրան, ը՛, հա՛, Դիոգենեսը, նա էլի՞... որ մտածում է...

Մարդիկ պատասխանում են.

- Հրեն: Էնտեղ նստած է: Տաքանում է արևի տակ:

Ալեքսանդր Մակեդոնացին իջնում է ձիուց, մոտենում է փիլիսոփային և սկսում է նրա հետ հանդարտ զրուցել: Ապա նրան ասում է.

- Քո իմաստությունն ինձ հիացնո՞ւմ է... Ես ցանկանո՞ւմ եմ քեզ համար անել ամեն ինչ, ի՞նչ դու ցանկանում ես:

Դիոգենեսը քնծիծաղով պատասխանում է.

- Ինձ ոչինչ պետք չէ: Ես ի՞նչ պետք է խնդրեմ քեզանից:

- Խնդրիր վստահորեն՝ ինչ որ

ցանկանում ես:

Ալեքսանդր Մակեդոնացու համհարզը շնչում է փիլիսոփայի ականջին.

- Դե խնդրիր, հիմարի՛ գլուխ, տուն ուզիր հողամասով: Կամ էլ կառք ուզիր ծիանքով: Դե՛ խոսիր, աղոթած ավանակ:

Դիոգենեսը լռում է, ապա ասում է Ալեքսանդր Մակեդոնացուն.

- Ահա՛ թե ինչ կխնդրեմ քեզանից, հոգյա՛կ, մի փոքր ա՛յն կողմը գնա, մի՛ փակիր արևիս դեմը...

Իհարկե, եթե Ալեքսանդր Մակեդոնացու փոխարեն լիներ ինչ-որ տխմարի մեկը, անպայման կվիրավորվեր, կբղավեր՝ ծայրը գլուխը գցած և մեկ էլ տեսար՝ հրամայեց հռչակավոր փիլիսոփային տանել բանտը գցել:

Բայց Ալեքսանդր Մակեդոնացին նույնպես մեծ մարդ էր: Նա ծիծաղեց և ասաց. «Գիտե՞ք ինչ, մարդի՛կ, ես կուզեի լինել Դիոգենես՛ը, եթե չլինեի Ալեքսանդր Մակեդոնացի՛ն»:

Եվ այդ խոսքի վրա ծիծաղեցին երկուսով էլ ու բաժանվեցին:

Եվ դա երկուսին էլ տվեց առողջ լիցքեր: Կեցցեն նրանք: Հրաշալի՛ մարդիկ: Հիանալի կարելի է անվերջ: Երանի՛ շատ լինեին: Այդ դեպքում կյանքը կլիներ շատ ավելի լավ: Քանի որ խելքը և ընտիր վարքը հավասարապես օգտակար են կյանքում, ինչպես հերոսի սխրանքն ու քաջությունը:

Թարգմ. Օլվա ՍԱՆԱՀՅԱՆ

Հիմա գնիր, որքան ուզես

Սիլվա Գոլդմանն առանց ափսոսելու ժամանակը, գնում և ուսումնասիրում էր իր խանութ եկած գնորդների վարքը: Երկար ուսումնասիրելուց հետո, նա հայտնաբերեց հետևյալ օրինաչափությունը. ձեռքի պայուսակներով խանութ եկած կանանց գնումներ կատարելու տենչը մարում է, երբ լցվում է պայուսակը և այլևս անհնար է լինում դրանց մեջ ուրիշ ապրանքներ տեղավորել: Մինչդեռ, նկատում էր Գոլդմանը, հաճախորդների գնումներ կատարելու մղումը դեռևս սպառված չէր լինում:

Խանութի տերը դիմեց խորամանկ քայլի. 1936 թվականին Գոլդմանը ծալովի աթոռի ոտքերին հարմարեցրեց անիվներ և աթոռի վրա հարմարեցրեց երկու զամբյուղ: Այսօր ամենատարբեր կարգի խանութներում գոյություն ունեցող գնումների հարմարավետ սալակների բեռնատարողությունը հասնում է կես տոննայի, այսինքն՝ հինգ անգամ ավելի, քան Գոլդմանի առաջին սալակի տարողությունն էր: Այնպես որ՝ գնիր և բարձիր որքան սիրտդ կուզի. ոյուրաշարժ և հարմարավետ սալակը հեշտությամբ կտեղափոխի ձեր գնումները:

ՄԵԾԱՅՈՒԳԻ ԳՈՂԵՐԸ

Ավստրալիայի Ադելաիդա քաղաքի բնակչուհի, 76-ամյա Էմմի Էլսոնը, տուն վերադառնալով զբոսանքից, տեսավ, որ բնակարանը տակնուվրա է արված: Պարզվեց, սակայն, որ կողոպտիչները ոչինչ չէին տարել: Երբ մի քիչ ուշքի եկավ կատարվածից, այդին սեղանի վրա հայտնաբերեց դուլար և մի գրություն. «Տիկին, ձեր տանը չկար գողանալու արժանի որևէ բան: Մենք ձեզ եմք թողնում մեր գրպաններում եղած ողջ գումարը՝ 23 դուլար: Գնացեք խանութ և դրանով որևէ ուտելու բան գնեք ձեզ համար»:

Գ ի պ ո ռ յ ո ռ ի

Գլխավոր խմբագիր՝ Ա. ՏԵՐ-ԳԱԲՐԵԼՅԱՆ

Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24բ, հեռ. 56-80-14:
Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448:
Ստորագրված է պաշտոնապես՝ 19.03.2015 թ.:
Տպաքանակը՝ 500: noravyan@mail.ru

"ТИТУЛОН" ("Hayka") газета НАН РА